

# ՆՈՐ-ՆԱԽԻԶԵՒԱՆԸ

ԵՎ

## ՆՈՐ-ՆԱԽԻԶԵՒԱՆԸ ՑԻԿԱՐԻՔ

ԵՐ. ԶԱՅԱԿԱՆ

ՖԷՄԵՐ ՈՒ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ



Ա Մ Ա Ն Ո Ր

ախիջևանցիք Ամանորին, բացի «Նոր-  
տարի» ասելուց, առում են և «կա-  
ղանդ» և միմեանց շնորհաւորելուս  
առում են. «Ճնորհաւոր նոր տարի,  
ամեն տարի բարով Հասնինք», կամ  
«Ճնորհաւոր կաղանդ», ամեն տարի  
բարով Հասնինք»: Ամանորի սովորա-  
կան ընծալաբերութիւններն էլ նոյն  
«կաղանդ» բառից կուլում են «կաղանդէք»:

Դեկտեմբերի 31-ին տանտիկինները – «եանկաները» ամ-  
բողջ օրը զբարուած են լինում կաղանդի սեղանի պատրաստու-  
թեամբ: Ցատկապէս, իբրև նոր-տարու նշան, կատարում են  
«կաղանդը», «Տարին», և զանազան պատուց խմորեցէն՝ «զա-  
թա», «Սամսա», քսակներ, մաղեր, հիւսեր, իսկ զիւղերում,  
բացի գոցանից, և «խալաջ», կովի կուրծքեր, ցորենի հօրեր և  
անսառնների սմբակներ:

«կաղանդը» պատրաստում են մեղրից և կաշին հանած և

\*.) Տես զիբ. VII և VIII.

բռլած ընկուզից: Մեղքը հում-հում այնքան հարում են— «զար-նում», որ բոլորովին սպիտակում է, յետոյ ձգում են մէջը բոված և մաքրած ընկուզը և այդ բոլորը միասին խառնելով, լցնում են մի գեղեցիկ անօթի մէջ ու դնում սեղանի վերայ:

«Տարին», որ տարուայ խոկական նշանն է, մի մեծ բոլորշի և տափարակ հաց է, որ այնպէս է շինուած, որ վերան պարզ կերպով երևում են մի քանի մասեր կամ ճիւղաւորութիւններ: Այդ մասերի կամ ճիւղերի թիւը լինում է կամ 12 հատ տարուայ 12 ամիսների թուով, կամ տան մէջ եղած անդամների թուին համեմատ: Հին ժամանակները սովորութիւն է եղել ընկուզով, չամիչով և զանազան նկարներով զարդարելու այդ հացի երեսը և, ինչպէս Տամակա-Հայաստանի շատ տեղերում մինչև ցարսօր էլ անում են, վերան թուականը զբելու, բոյ այդ սովորութիւնը ներկայաւոս վերացել է և մնացել է միայն, այն էլ մի քանի ընտանիքների մէջ, չամչով և ընկուզով զարդարելու սովորութիւնը: Տարիի-ի մասերից մէկի մէջ զրուում է մի արծաթ դրամ իրրև բազդիքորձում: «Տարին» կտրում ու բաժանում են ընտանեաց անդամներին կամ նոյն խոկ կազմեցի գիշերը, կամ երրորդ օրը, կամ ծննդեան ճրագալոցին և կամ, վերջապէս, յունուարի վեցին, տնօրինէցից յետոյ: Ճատ հին ժամանակները, ինչպէս երևում է, «Տարին» կտրելու ու բաժանելու ժամանակն եղել է միայն կազմնդի գիշերն իրը տարուայ նշան, յետոյ արդէն սովորութիւն է զարձել յետաձգել մինչև տնօրինէնէցը, որովհետև նախջևանցիք սովորութիւն ունին տնօրինէցի ժամանակ սեղանի վերայ դնել ծննդեանը ջուր և հաց, խոկ զատկին՝ կարմիր հաւկիթ և զատկահաց: Այժմ քաղաքում, որովհետև տնօրինէցը կատարուում է ոչ միայն Յունուարի վեցին, այլ և հետևեալ օրերը ևս, այլ ևս չեն սպասում, որ առաջ «Տարին» օրհնուի, յետոյ արդէն կտրուի ու բաժանուի, այլ բանախ ծննդեան ճրագալոցին կատարում են այդ զործողութիւնը, խոկ օրհնելու համար սեղանի վերայ դնում են եկեղեցուց բերած օրհնած ջուր և «Տարի»-ի տեղ մի որ և է հաց: Տարին կտրելու ժամանակ ում որ դուրս է զալիս արծաթ դըրամը, նա տարուայ տէրն է համարուում և ընտանեաց մէջ

ամենաբարդաւորը։ Դիամը չբաղդաւորը կամ ձգում է իւր քը-սակը, որ ամբողջ տարին լիքը լինի փողով և կամ տանում է եկեղեցի, մոմ գնում և ազօթելով վառում սրբերի առաջ։

«Քաթուն» այլիքից ու ջրից շաղախուած ու փոքրիկ, կլորիկ, ուռուցիկ ձևով շինուած խմորեղէն է, որի մէջ դրոււմ է ընկուղից ու մեղրից պատրաստուած խորիսին, իսկ «Սամ-սան» զարձեալ միայն ալիւրից ու ջրից շաղախուած եռանկիւ-նաձև կարկանդակ է, որի մէջ դրոււմ է սոխ ու չամիչ։ «Խա-լաջը», որ պատրաստում են միայն դիւղացիները, կիսալունա-ձեւ, կամ կլորակ, մէջը ծակ հաց է, զարդարուած զանազան հիւսուած քով ու օրինակներով, իսկ մազի հիւսերը, քսակները, կուրծքերը, ցորենի, հորերը և սմբակները, որտնցից առաջինը և երկրորդը զիխաւորապէս պատրաստում են քաղաքացիները, իսկ միւնները միայն զիւղացիները, նոյն առարկաների ձևով, շինուած խմորեղէններ են, որոնք արտախայտում են ժողովրդի պէս-պէս բաղձանքները՝ որ տան մէջ զանուած աղջիկների մասերն երկար լինեն, տղամարդկանց քսակները լիքը փողով, կովերն առատ կաթ տան, անասուններն առողջ լինին և ցո-բենի հորերը լիքը ցորենով։

Երեկոյեան գէմ լսուում է «կալանգոս» երգող երեխանե-րի ձայնը, որոնք խումբ-խումբ տնկցուուն են ման զալիս, եր-դեղով շնորհաւորում են կազանդը և զաթա, սամսայ, խալաջ ու փող են հաւաքում։ Քաղաքում «կալանգոսն» երգում են զեկտեմբերի 31-ի առաւտոնենից մինչև երեկոյ և, որ հետա-քրքրականն է, հայ երեխաներն երգում են և՛ հայերէնը և՛ ուստեւէնը, իսկ ռուս-երեխանները և՛ ռուսերէնը և՛ հայերէնը։

Դիւղերում «կալանգոս» երգում են այսպէս։

Կալանգոս, դոս, դոս,

Սմէն տարի բարով հասնինք,

Ընորհաւոր նոր-տարի,

Նոր եանկալիս <sup>1)</sup> տուն բերի,

Հայէ շապիկ հազուցի,

<sup>1)</sup>) «Եանկու» առում են եղրօր և հօրեղրօր կհողը և տանտիկիններին։

Քիրմէ գօտի կապեցի,  
Խաղաջ՝ տուէք:

**Քաղաքում երգում են արագէս.**  
Կալանդոս, գոս, գոս,  
Կարսնդոսը՝ էկի է,  
Դուռին տակը կայնի է,  
Ջայէ շաղիկ հազի է,  
Կարմիր գօտի կապիլ է, <sup>1)</sup>  
Մէկ աւունին <sup>2)</sup> խավիլ է:

Թեկտումբերի Յ1-ին զիշերը ճիշդ այն բոպէին, երբ հին տարին անհետանում ու կորչում է յախտնականութեան մէջ և ծնում է նոր-տարին, գետերը և աղբիւրներն ոսկի են հոսում, ուստի և զիւղերում ամեն մէկն աշխատում է արդ ժամանակ ջրերի վերայ գտնուել, ջուր վերառնել, որ հարստութիւն տուն տանէ: Նոյն ժամանակ երեւում են և ահուելի «լըոնջոլողը», և «ժիվառը» (շրւոտ) և «Ալամ-թառալիմը» և մկում են շրջել մարդկանց մէջ ու զանազան փորձանքներ բերել նոյա դլոին, ուստի և ծնողները զգուշացնում են երեխաներին և ցեն թողնում նոյա նոր-տարի զիշերը դուրս գալ:

Նոյն գեկտումբերի Յ1 երեկոյեան մինչև որ տան ըոլոր անզամները չըհաւաքուին, ճրագ չի վառուում տների մէջ: Երբոր տնեցիք հաւաքուում են, բոլորեքեան մտնում են մի սենեակ և մոմը վառելով, դնում են մէջտեղը, սեղանի վերայ ճրագի լոյսից, ՚ի հարկէ, մարդկանց ստուերն ընկնում է պատերի վերայ և երեւում մէկինը լուսաւոր, միւսինն ազօտ զծագրութեամբ: Թորանից զանազան գուշակութիւններ են անում, թէ ով նոր-տարուայ ընթացքում աւելի բազդաւոր կ'ըլինի և ով անբազդ: Որի որ ստուերը պարզ կերպով արտացոլուի պատի վերայ, նա էլ տարին յաջօդութեամբ կանցկացնէ, բազդաւոր կ'ըլինի, որինը, ընդհակառակը,

1) Ալամ-թառը

2) Խայիլ ըլլամ-համաձայն լիներ

իուաւար ու ազօտ, նա փորձանքների կ'հանդիպէ, որոնցից դուցէ և անվտանգ չ'կարողանայ գուրս զալ:

Հայկական Ամանորի և Կաւասարդի մասին այս գաղթականների մէջ լիշողութիւն ամենակին չի պահպանուել:

### ԽՆՈՒՆԴ ԵՒ ՄԿՐՏՈՒԹԻՒՆ

Կրննզեան ճբազալոցի ժամերգութիւնը շատ կանուխ է ըսկըսում, համեմատաբար շատ կանուխ էլ վերջանում է: Եկեղեցամ ժամաւրըներից շատերը կանգնում են վառած մոմերով ոչ թէ միայն Դանիէլի զրքի ժամտնակ, այլ և առհասարակ ժամերգութեան սկզբից մինչև պատարազը: Դանիէլի զիրքը, ինչոքս ամէն տեղ, այստեղ էլ կարդում են մանուկները. բոլոր զիրքը բաժանուում է երկու մասի՝ ըուն պատմութեան, որ առանձին կանգնած կարդում է երեխաններից մէկը, և Սեդրակի, Միասքի և Ծրէդնակոմի խօսքերի, որ արտասանում են երեք յանուկ՝ միասին՝ նոյնպէս առանձին կանգնած: «Յըհնեց»-ը երգում են բոլորեքեան միասին:

Այն մէկի կարդալու նիւթը տպուած է առանձին-առանձին երկար լինթերի վերայ, որ հեշտ լինի բռնելու ու կարդալու, զրքակալ չ'դրուի, բերանացի էլ սովորելու հարկաւորութիւն չինի:

Ժամաւրըները վերապառնում են տուն, բերելով իւրեանց հետ նոյնքան մոմ, որքան տան մէջ անդամ կայ, և վառում են ընթրքի ժամանակ ամեն մի սպասի առաջ և արդպէս վառած մոմերով էլ ընթրիք են անում:

Երեկոյեան տնօրինէք շրջելու սովորութիւնն չ'կայ: Քահանաները միայն ացցելում ու օրհնում են իւրեանց կնքահարերի և այն տները, որոնց մէջ հանգուցեալ է եղել, իոկ միւս տների օրհնութիւնը թողնում են միւս օրուան:

«Ուետիս» երգելու սովորութիւնը, որ այնքան ընդհանրացած է հայերի մէջ, քաղաքում արդէն վերացել է և մնացել է միայն զիւղերում: Երգում են առհասարակ հետևեալ «Մեծ» կոչուած աւետիսը.

Ասող մի ելաւ յարկելից, աւետիս,  
Խնասոնասէրք զարհութեցան, աւետիս.  
Աստղաբաշխներ ժողովեցան, աւետիս.  
Ջատ քննեցին և ջիմացան, աւետիս.  
Խըրեանց մէջ կայր մը գտան, աւետիս.  
Թռէ էն մտան, առին, երան, աւետիս.  
Երբ այն աստղն Նայեցաւ, աւետիս.  
Այն կուրացած աչքը բացաւ, ա. ետիս.  
Եղբայր, այս մեծ աստղ է նշան, աւետիս.  
Թագաւոր Տնաւ ՚ի Հրէաստան, աւետիս.  
Մելքոն, Գնասպար և Բաղդասար, աւետիս.  
Երեք թագաւորք ափնուականք, աւետիս.  
Երթանք, տեսնենք Հայոց արքայն, աւետիս.  
Խորհուրդ արին խրեանց մէջը, աւետիս.  
Ջատ հեծելոք ճամփայ մտան, աւետիս.  
Աստղն ցուցնէր նոցա ճամփան, աւետիս.  
Ցերենիք հրեշտակ երկեցաւ, աւետիս,  
Գիշերը աստղ լուսոյ մտան, աւետիս.  
Թէ Ցիսու է թէ Քրիստոս, աւետիս.  
Օրհնած տունիս տանուտէրին, աւետիս.  
Թէ Պօղոս է, թէ Պետրոս է, աւետիս.  
Օրհնած տունիս տանտիկնորդը, աւետիս.  
Թէ Սառա է, թէ Մարթա է, աւետիս.  
Օ, հնած տունիս կը իմներուն, աւետիս.  
Աստղ ած այս տունը շէն պահէ, աւետիս.  
Մինչև գալուստն Փրկչին, աւետիս,

Բացի այս Համախիցա, որ երդում են բոլոր զիւղերում,  
Չալթըրում, Թօփտիում և Փոքր-Սալայում երդում են և ու-  
րիշ ժողովական աւետիսներ։ Թօփտիում և Փոքր-Սալայում  
երդում են հետևեալը.

Երանելի կոյս Մարիամ, աւետիս.  
Որ կոյս էիր, կոյս Տնեցար. աւետիս.  
Նշար երեր Օստուածորդին. աւետիս.  
Հասուածողին այն Սուրբ Հոգին, աւետիս.

Մարիամ առաւ իւր մէկ որդին, աւետիս.

Տարաւ նորա աշկերտութիւն, աւետիս.

Երբ քննեցին, երբ հարցուցին, աւետիս.

Նա կ'կարդար Սաղմուտան, աւետիս.

Սաղմուտան երբ քննեցին, աւետիս.

Նա կ'կարդար Ծարականներ, աւետիս.

Ծարականներ երբ հարցուցին, աւետիս.

Նա կ'կարդար աստուածաբան, աւետիս.

Աբեղաններ իրար եկան, աւետիս.

Կոյս Մարիամին զիբ խրկեցին, աւետիս.

Մարիամ արի, առ քո որդիդ, աւետիս.

Քո մէկ որդուդ, այն Սուրբ Հոգուն, աւետիս.

Նա մեզ չանէր աշկերտութիւն, աւետիս.

Մեղի կանէ վարպետութիւն, աւետիս.

Մարիամ կորոյս իւր մէկ որդին, աւետիս.

Կուկար կողըար, կաղաղակէր, աւետիս.

Ճամբորդներուն հարցունք կանէր, աւետիս.

Մարիամ, մեզի տուր բանիդ նշան, աւետիս.

Որպէս տեսանք, այնպէս պատմենք, աւետիս.

Ես իմ որդիս եմ ցանկացեալ, աւետիս.

Ճայէ շապիկ իւրոյս անձին, աւետիս.

Ի դիմատան արև ազոյն, աւետիս.

Պայծառ կենար արծաթ իւրաքանչիս, աւետիս.

Մեր մը տեսաւ յշրուադիմ, աւետիս.

Խաչ դաւագան ունէր մեռին, աւետիս

Աւետարան ունէր ի զիբին, աւետիս.

Չալթըրում էլ երգում են հետևեալը.

Ցիսուս, Ցիսուս աշակերտաց, աւետիս.

Գաթսուն և վեց հայրապետաց, աւետիս.

Հետ երթայնն, հետ քարոզին, աւետիս.

Ընկալ ու կոյր կուսաւորչն, աւետիս.

Գնացին, եղան ընտրուած ծովուն, աւետիս.

Որտեղ նաւեր կանգնած կայն, աւետիս.

Եղբակը առէք, ելէք նաւորդիք, աւետիս.

Ես ձեզ անիմ բազում աղօթք, աւետիս,  
Մեղի չէ պէտք բազում աղօթք, աւետիս.  
Մեղի պէտք է դրամ բազում, աւետիս,  
Խայազննքեց, դրամ կաղմեց, աւետիս.  
Երեք նաւաշը ելան ՚ի վեր, աւետիս.  
Մորին էլ տականց պրտորնցաւ, աւետիս.  
Սղբացը, այս ինչ մարդ մեղաւոր, աւետիս.  
Մարդ մեղաւոր, բաց պէտք, աւետիս.  
Ելան ՚ի վեր, ընկան լր ոտք, աւետիս.  
Դուն մեր Ցիսուս, դուն մեր Քրիստոս, աւետիս.  
Եղբացը, պահէք, քուն մի եղէք, աւետիս.  
Ես ձեզ անիմ բազում աղօթք, աւետիս.  
Բազումք ելան քաղցրագիշեր, աւետիս.  
Հաւն ալ խօսեց երեք բերան, աւետիս.  
Եղբացը ելէք անուշ քններէդ, աւետիս.  
Ոնչնած ծովիս, օրհնած նաւիս, աւետիս.  
Օրհնած այս տունիս, կտրիմներ, աւետիս.  
Ասոտուած այս տուն շէն պահէ, աւետիս.  
Ժէն պահողն այ առողջ պահէ, աւետիս.  
Շմեն տարի բարով համնինք, աւետիս.  
Ձեզ սիրելով հաւասար, աւետիս. <sup>1)</sup>

Ալբագալոցի ընթրիքի համար, բացի սովորական նաւակատիւաց կերպակրներից՝ ձկնախաշուից, տապակած ու խաչած ձկնեղէնից, պատրաստուում է անպատճառ և գլուքաթիւ, որ տուում են ձկնախաշուի հետ միասին։ Վկուբաթիւն նման է Ռուսաց պիրոզին։ Բայց աւելի նուրբ է, աւելի ճաշակով է պատրաստուում, աւելի հայտամ է, քան թէ սովորական պիրոզները։ Կախիջեւանցի եանկաներն ու «ջիջաներն» <sup>2)</sup> մեծ վարպետութեամբ նարանով – օխչովով – «թէել բանալ» զիտն և մեծ ճարտարագիտական բնութագիր պատրաստում են «թէելրաց-կուրաթիւ», «թէելրաց-սամսա» և քառասուն թէել վախլաւա։

<sup>1)</sup> Այս աւետիսները վայիսանտ են։ Տես Կարապետ Կոստանեանցի «Նոր ժողովածու, Ը պահ, 1, 4 և 6 աւետիսները».

<sup>2)</sup> Ջիջա ասում են մեծ բրոդը ու բան անող կանանց։

թելքաց-կուրաժիի, ինչպէս և թելքաց-տամայլի թելքրի թիւն անորոշ է - 14, 20 և 30, մի խօսքով որքան շատ, այնքան լաւ: Թելքրի կէսն իւղով օծելուց և միմեանց վերայ գարսկուց յետոյ, լցնում են վերան թելթև տապակած ձկան միս ու սոխ և այդ բաղը ծածկելով իւղով օծած և միմեանց վերան գարսած թելքրի միւս կիսով ու վերան հաւկիթ քսելով, դնում են փուռը սիկելու:

Մկրտութեան ժամերդութիւնը նոյնպէս սկսում է շատ շուտ և աւարտուում է առաւոտեան շատ կանուխ, այնպէս որ առաւոտեան վեց-եօթ ժամին արդէն ամեն ըան վիրջացած է լինում և քահանաները սկսում են տնօրինէք մանդալ: Տնօրինէք կատարուում է հասզեսպ և այդ հոգեսոր նուիրական արարութեան ոչ վայել վաեմութեամբ: Քահանաները պատճառ բռնելով այն հանգամանքը, որ պէտք է աշխատեն հէնց առաջին օրն օրհնել իւրեանց ծխականների տների մեծ մասը, սրբիկեան իրքն թէ ժողովուրդը նեղանում է, երբ քահանան ուշ է զնում նոցա տունը, տուն մտնելը ու զուրս զալը մէկ են անում, շարականն երգում են հէւալով, աւետարան չեն շըրջեցնում իւրեանց հետ, այլ ասում են ըերանացի, շատ անգամ ոխալներով և կակազելով, և այն և այլն:

Ջօրինութեան համար եկեղեցիներից հանդիսով դուրս գալու, զետք զնալու և կոմ եկեղեցիների բակում յօրգանան շինելու սովորութիւնը, որ այնքան շընդութեամբ սիրում են կատարել հայերն ամեն տեղ, այս զաղթականութեան մէջ չը կայ և, ինչպէս երեւում է, վերացած է եղել դեռ Պահմում, գուցէ, մալու անդ մահմեղականների երկիւղից: Հանդէոր կատարուում է եկեղեցիներում առանձին աւաղանների մէջ և ժողովուրդը մեծ ջերմեռ անդութեամբ խռնուելով, ինչպէս սովորութիւն է ամեն տեղ, օրհնած ջուրը տուն է տանում աման-ներով, որովհետեւ տնօրինէքի ժամանակ նախիջևանցու սեղանի վերայ հացի հետ միասին պէտք է անդուժնառ և օրհնած ջուր լինի:

Խաչը ջրից հանելու կամ խաչի կնքահայրութեան հետ միասին այս զաղթականների մէջ կայ և մեռոնի կնքահայրու-

թիւն, որ կատարուում է նոյնպէս վայելուչ հանդէսով։ Կնքահար լինել ցանկացողը հագնում է շապիկ, խալ քահանան բռնելով նորա զլիխն ո. մեռոնի աղաւնին, հանդիսաւոր թափօրով գալիս, բարձրանում է նորա հետ բեմը։ Խաջի կնքահարութիւնը, ինչպէս երևում է, քաղաքում շուտով կ'վերանայ, ինչպէս արդէն վերացել է գռնարացէքին աշխարհականներից մէկի ձեռքով դուռը-վարագոյբը բանալու սովորութիւնը։ Քիւղերում գռնարացէքին, փոխանակ սեղանի վարագոյբը բանալու, պատկերների երեսն են վակում ու բացանում։

Օրհնած ջուրը պահում են առանձին ամաններով տների մէջ ամբողջ տարին և գործ են ածում իրեւ դեղ ու զարման և իրեւ մաքրութիւն ու փարատութիւն, երբ հարկաւոր է լինում մի որ և լիցէ ազտուած, պղծուած անօթ սրբելու, մաքրելու։ Ցներում պահում են նոյն նպատակով ու նոյն գործադրութեան համար և Երուսաղէմից բերած «Քետ յորդանալ», ալսինքն Յորդանանի ջուր։

### ՍՊՈԾԱՇԽՈՐԾ ՊԱՍ ԵՒ Ա. ՄԱՐԴԻՍ

Սուաջաւորաց պասին Նախիջևանցիք էլ ո. Սարգսի պատեն առում։ Ա. Սարգիսը, որ Ցուլիանսո ուրացողի բռնութիւնից փախչելով, եկել է նախ Հայոց Տիրան Բ. թագաւորի մօտ և յետոյ գնացել է պարտից զարուհի մօտ և նահատակուել է սորա ձեռքով իւր Մարտիրոս որդու հետ միասին Ցունուարի 30-ին, ինչպէս յայտնի է, միշտ զայթակղութեան քար է հղել Յաւնաց և Հայոց եկեղեցիների յարաքերութեան մէջ։ Հայերը նորան հաւատաքի համար հալածուած ու նահատակուած համարելով, ընդունել են իրեւ սուրբը և նորա համար յատուկ տօն են նըշանակել, իսկ Ցոյները նորան իւրեանց արքայադուտորը փախցնող արկածախնդիր մէկը համարելով, ոչ միայն նորան սուրբ չեն ընդունել, այլ և անարդել են։ Հիմնուելով այն հանգամանքի վերայ, որ հայ ժողովուրդը միամտութեամբ այդ որը

տօնք մեծաւ մասամբ Առաջաւորաց պատի շարաթ՝ ոլլը գալու համար, ո. Սարգսի պատ է կոչուում ամբողջ Առաջաւորաց պասը, միշտ և հանապաղ զբարարութեան բամբասել են Հայոց եկեղեցին նոքա մինչև անզամ արդ մասին մի ամբողջ առասպել են հնարել ու մտցրել նորան իւրեանց ճաշոցների մէջ և դոյն առասուցնելի հեղինակութիւնն ընծայել են մի ոմն Սահակ-անունով կաթողիկոսի, որ իրու թէ զոյտութիւն է ունեցել հայոց կաթողիկոսների շարքում և ապրիլ է ժի դարում։ Արդ առապելարանական Սահակ կաթողիկոսի հեղինակութիւնը, որ մի ընդարձակ յունարէն դրաւածք է, զոյտութիւն ունի մինչև ցայսօր և կոչուում է շնառ բնդում Հայոց, առասպելարանում է, թէ երբեմն եղել է Հայոց մոլորութեան վարդապետ Սարգիս անունով մէկը, որ ունեցել է մի շուն ։ Արցիվուր թրջործումով Աւր որ զնալուս է եղել արդ Սարգիսն իւր մոլորութեան սերմերը ցանելու համար, նախապէս միշտ ուղարկելուս է եղել իւր շանը իրրու առաջընթաց և իւր անելիք ացելութեան աղբանշան։ Ժողովուրդը տեսնելով Արցիվուրին, իմանում է եղել վարդապետի զալու մասին, պատրաստութիւն է տեսնում եղել և թափօրով բնդառաջ դուրս զալով, սիրով ու մեծարանքով ընդունելուս է եղել նորան։ Մէկ օր էլ իրրու թէ զալլ է պատահել շանը, երբ դա իւր սովորական պաշտօնով զնալուս է եղել գիւղերից մէկը, և պատառել նորան, ուստի և վարդապետը զալով, չի տեսել այն յարգանքն ու պատիւր, որ առհասարակ սովոր է եղել տեսնելու։ Մտնելով գիւղը և իմանալով, որ Արցիվուրը չի եկել, մարդիկ է ուղարկել որոնելու, և զտած սովորներից գուշակելով նորս զիխին եկածը, շատ ցաւիլ է, և հրամաբել է Հայիրին նորա մահուան համար սուդ անել, ծոմ պահել և սահմանած պասը կոչել է շան անունով ։ Արցիվուրց պահէք։

Ահա Հայնրի և յայների մէջ արդ տօնի առթիւ առաջ եկած խօսք ու զրոյի, Հականառութեան և զորսնից ծագած փոխարձ առելութեան հետևանքը կամ արգուաիքը պէտք է համարել այն համոզմունքը կամ կարծիքը, որ զոյտցել և մինչև ցայսօր զեռ պահպանուել է նախիջևանցոց մէջ, թէ ո.

Սարգիսը միշտ վրէժխնդիր է լինում յոյներից, իւր տօնի շարաթը բքախեղդդ աներով յան ճանապարհորդներին։ Նախիչևնցինցիք, երբ ո. Սարգսի տօնի օրը կամ նոյն իսկ ամբողջ Առաջաւորաց պատի շարաթն քամիներ են բարձրանում և բռնը է լինում, սովորութիւն ունին ասելու. «ո. Սարգիսը հռում պիտ խըզդէ»։ ո. Սարգիսը հռում չխըզդած չիլալ և կամ թէ ոս. Սարգիսը հռում պիտ փատցունէ»։ ո. Սարգիսը հռում չը փատցրած չիլալ։

Եւս զաղթականների կարծիքով ո. Սարգիսը մի գօրաւոր և արագահաս սուրբ է, որ ձի հեծած անդադար սրանում է ամագերի և ծովերի վերայ, աղջիկների բաղձանքները և երիտասարդների-Շիտրինների «Ճուրատն» է կատարում, ճանապարհորդներին և առհասարակ նեղութեան մէջ գտնուողներին շուտափողթ օգնութիւն է հասցնում և ազատում։ «Սուի Սարգիս, տուն նեղիս հասնիս», բացագանչում և երեք անգամ խաչակնքում է երեսին նախիջևանցի դիւզացին, երբ նա կամենում է շուտով մի բանի հասնել, երբ նա մի որ և իցէ նեղութեան մէջ է լինում<sup>1)</sup>։

Թէ ինչ տեսակ են համանում ո. Սարգսին նախիջևանցիք և ինչպէս են երեսակայում նորան, — կարելի է տեսնել հետևեալ աղօթքաձև հին ասացուածքից, որ մինչև ցայսօր դեռ պահուել է և երբեմն-երբեմն կարելի է լսել ծերերի բքանից։

Քիշեր ասի տուս էլլայ,  
Մէկ գօրաւոր սուփ տեսայ,  
Սոփ, լացի, ոթքն ինիայ,  
Սոփ, հայր սուրբ, անունդ ինչ է.  
Իմ անունս սուփ Սարգիս,  
Օթուս անունը՝ սուփ Մատուիրոս,  
Դիս կըքաղէ ամպին վրան,  
Ընթաթար ծովին վըրան,

<sup>1)</sup> Տես Օրակայել Պատկանեանցի «Չախու» գրուածքը «Խորօնաց և Խաչուու արևոտական պահպան», այսու Լ. Գովոր Խաչիչեանունը։

Գնա, ասաք քերիններուն  
Ազատ անէ իր արևուն<sup>1)</sup>:

Հասած աղջիկներն իւրեանց՝ բաղձանքներին և կտրին-ներն իւրեանց ամուրատին հասնելու համար այդ պատի շաբաթը սովորաբար երեք օր ծում են պահում և ճաշակուում են: Այդ ժոմապահութեան առթիւ էլ երրորդ օրը փեսացուների տներից հարսնացուների տները «ժոմէչէքը» է զալիս: «Ժոմէչէքը» բաղձագած է լինում մի որ և լիցէ կնոջ ընծալից, անուշեղինից՝ «խամբմուլս հալուա», տիզիկի հալուա, և այն և մի տեսակ պղպղախառն եփած մեղրաջուր ըմպելիքից, որ կոչուում է «հալրա»: Հարսնացուների տներում «ժոմէչէքը» վայելելու համար «Աղջիկ-ժողոսունք» է լինում: Կշանած աղջիկները հրաւիրում են իւրեանց ընկերունեիներին և բարեկամ աղջիկներին և նոցա հետ միասին ուսում, խմում, պարում և ամրող օրը ուրախուանում են: Այդ դէպքից օգուտ են քաղում նշանուած և նշանելու կտրինները. նքա հաւաքուում են «ժողովատանքի» տան պատուհանների տակ և աշխատում են նայել, տեսնել՝ որն իւր նշանածին, որն էլ իւր հաւանածին: Նոցա, այդ կտրիններին ոչ մի կերպով հեռացնել, վարել պատուհանների տակից չի կարելի, որովհետեւ, նախ, ինչպէս ասում են նախիցևանցիք, «նշանուած կտրինները հաստերես կըլլան», երկրորդ, ինքեանք աղջիկներն էլ փոխազարձաբար ցանկանում են իւրեանց փեսացուներին ու հաւանածներին տեսնել:

### ԴԼՐԸՆԴԻԷ ԵԽ ԲՈՐԵԿԵՆԴԱՆ

Նախիջևանցիք Դըրընդէղին ասում են «Տերինստագ» և դիւղերում կատարում են համարեա թէ այնպէս, ինչպէս ուրիշ տեղերում, փողոցներում, հրապարակներում և տների բակերում խոտի խորձերից դէզեր կազմելով, եկեղեցուց բերած վառած մոմերով վառելով նոցա և չորս բոլորը պատելով և

<sup>1)</sup> Այս աղօթքը առաջին անգամ առաջբառած է Քերովիք: Պատկանեածի «Տօնօր» Խաչատրանցին: ի մէջ:



վերացից թռչելով: Քաղաքում չայոց արդ կռապաշտական հետաքրքրական հին սովորութիւնն արգէն վերանալու վերայ է. ճիշդ է, այդ օրը երեկոյեան եկեղեցիները լցուած են լինում աղօթողներով, որոնք կանդնած են լինում վառած մոմերով և ժամերգութիւնից յետոյ ամենքն էլ շտապում են և աշխատում արդ մոմերը չ'անդցրած տուն հասցնել և նոյս հալուածքից իւրեանց զօտիների և զիխարիների մէջ կաթեցնել, բայց արդէն «գլընդէղներ» չեն շինում: Տեղ-տեղ միայն կարելի է տեսնել խանութների առաջ ձգուած փոքրիկ խոտի կորուեր, որ խանութների տղայքը վառում են, կամ, լաւ է ասել, այրում, ծխեցնում են իրեն միշտակ դըրբնդէղի:

Գիւղացիք կարծում են, որ զըրէնդէղի ծխով ու կրակով այրում ու վերջանում են «ժիվոտներին», որոնք երևում են նոր-տարուն: Թոփոտի զիւզում կայ մի փոքրիկ ձորակ, որի եղերքում զտնուած կրաքարի ժայռերի տակը և ճեղքիրում գոյացել են այրածն. փոտեր: Ահա արդ ժարուերից մէկը, որ կոչուում է «Բշգրւողայեա», մասնաւրապէս ծառալում է իրեւ «ժիվոտ» ալբերտ տեղի դըրբնդէղին զիւղի տղայքը հաւաքուում են վերոյիշեալ ձօրակը, խոտ են ձգում «Բշգրւողայեա» տակ գոյացած փոսի մէջ և ալբերով երկոր ծխեցնում են: Եթէ այդ ժամանակ մէկը նոյս հարցնէ, թէ «Տղալք, ճնչ կանիք», նոքա կ'պատասխանեն. «Ժիվոտ կերինք»: Նոյն կարծիքը դըրբնդէղի մասին ունին և քողաքացիք, միայն որ նոքա արտեղ «Տերինստաղի» կրակի, ու ծխի մէջ ալբում, ոչնչացնում են ոչ թէ «ժիվոտներին», այլ «խոնջօլոներին», որոնք նոյնպէս երևում են նոր տարուն:

Բարեկենդանին նախիջւանցիք ասում են «Բարիկենանք» և անց են կացնում նորան, ամրոց շարաթը, նամանաւանդ վերջին երեք օրը միմեանց մօտ հաւաքուերով-«բարիկենանք նոտելով», կեր ու խում անելով, քաղաքի հարեաններն ընտիր սահնակներով, իսկ հասարակ ժողովուրդն ու զիւղացիք «Ճուկի չահնաներով»<sup>1)</sup> փողոցէ փողոց շրջելով ու գուարճանալով:

1) Զանա—սահնակ:

Նախիջևանցւոց յատուկ սովորութիւնն է արդ ուրախութեան օրերում զիմուկաւորուելու-«Քամալ<sup>1)</sup>» ըլլալու և զիշերներն իւրեանց ցանկացած տներն ալցելելու Նրիտասարդներն ու աղջիկները դորանով միջոց են ստանում իւրեանց հաւանածների տները գնալ և ծպտեալ պարել ու զուարճանալ նոցա հետ ։ Քամալները շրջում են խումբ-խումբ, խմբերը բազկացած են լինում միմնաց աղջական, ծանօթ ու բարեկամ աղջիկներից ու երիտասարդներից, որոնք զանազան զիմակներ ու զգեստներ են հազած լինում։ Մի խումբը ներկայացնում է հարս ու փեսայ իւրեանց մե բձաւորներով, միւսը-հոգեսրականներ՝ կոյս, քահանայ, արեղայ, երբողը՝ բոշաներ, չորրորդը զօրսկաններ, և այլն և այլն։

«Քամալները» սովորաբար չեն խօսում, որովհետեւ վախենում են, որ ձայնից ու խօսելու ձևից ճանաչուեն։ Նոքա մի տուն մտնելուս, կամ երգում են, կամ դաշնամուր նուազել տալիս ու պարում, կամ, վերջապէս, ինքեանք են նուազում և ձեռների շարժուածքով ու փոխած ձայնով զանազան սրաբանութիւններ, կատակներ անում, զուարճանում ու զուարճացնում տնեցւոց։

Բան բարիկենդանի, կամ, ինչպէս նախիջևանցիք ասում են, Մեծ-բարիկենանքի վերջին երկու օրը ցերեկով էլ փողոցներում երևում են «Զամալների» խմբեր, որոնք կամ ձիաւորուած, կամ սալլերի վերալ նստած դար ու զունայով կամ երգեհոնով, հարալ-հրոցով, պարելով ու ձիարշաւ լինելով շրջում են փողոցէ փողոց, կանգնում են խանութների առաջ, մտնում են տների բակերը ու փող են հաւաքում։ Դա նախիջևանի հարկական կառնաւալի պրացիստիաններն են, որոնք զիւղերում սովորաբար ներկայացնում են հարս ու փեսայի հանդիսաւոր ընթացքը, իսկ քաղաքում, բացի հարս ու փեսայի ընթացքից, և ուրիշ պատկերներ։

Բացի այս բոլորից, նախիջևանի զիւղերում մնացել է ուրիշ շատ հայրնակ տեղերին յատուկ բարեկենդանին ընդհա-

1) Քամալ=զիմակաւոր։

նուր ձիարշաւ սարքելու սովորութիւնը։ Գիւղացի կտրիմները դուրս են գալիս դաշտը և «խոյի» են գալիս, այսինքն ձիարշաւ են լինում, աշխատելով իրար առաջը տալ և շուտ հասնել նշանակուած տեղը։

Բուն բարեկենդանի վերջին օրը-կիւրակի երեկոյեան Կախիջնանի պառաւները-«Մեծաները» կամենալով իւրեանց թուներին, կամ առհասարակ տան մէջ եղած մանուկներին ժամ առաջ քնած տեսնել, սովորաբար ասում են նոցա, «Հայտա, տղաք, ասօր կանուխ պառկէք, որ առաւօտն ալ կանուխ էլլիք տեղերէդ ու տեսնիք «Մըսամբաասը», որ քիշերը տէրտէրը պիտ բերէ ու կախէ։

### Մ Ե Կ Պ Ա Ս

Մեծ-պասին նախիջնանցիք ասում են «Ախացք»։ այսինքն ազուհաց, և միմեանց շնորհաւորելուս ասում են։ «Ճնաւոր ախացք»։ Պատ բռնելու սովորութիւնը գիւղերում պահպանուել է բոլոր մաքրութեամբ, իսկ քաղաքում վերացել, կամ լաւ է ասել, վերանալու վերայ է։ Զորեքշարթի և Ռորաթի խոպաչին պահում. պահում են միայն շաբաթապասերը և Քառասոնրդաց պասը, այն էլ միայն ծերերը և հաղորդուողները։

Ամբողջ Մեծ-պասը պահողների թիւը շատ սակաւ է, առհասարակ պահում են մի կամ երկու շաբաթ հաղորդուելուց առաջ։ Պասի վերանալու հանգամանքն առաջ եկած պէտք է համարել երկու զիխաւոր պատճառախց՝ ընդհանրապէս պասի այս գաղթական հայերի աչքին իւր նշանակութիւնը կորցնելուց և տնտեսական հանգամանքներից։ Պասուց կերակուրներն աւելի թանգ են նստում, քան թէ ուստուցը, որովհետև պասուց կերակուրների զիխաւոր նիւթերից մէկը՝ բանջարեղէնը այս կողմերում պակասում է։ Մեծ-պասին այս կողմերում դաշտերը դեռ ձիւնով ու սառուցով են պատած լինում, ուրեմն և խօսք չի կարող լինել թարմ կանաչեղէնի մասին։ գանազան բանջարեղէնի բռնուացքներ էլ շատ քիչ է լինում, որովհետև այս

կողմերում, նախ, ուտելու կանաչեղէնի տեսակների թիւը շատ սահմանափակ է, եղածներն էլ վաստ տեսակից են, կամ բերովի ու թանգ են, երկրորդ ժաղավորդն էլ սովորութիւն չունի առանձին կերպով կանաչեղէն ու բանջարեղէն գործածելու կամ իրեն առանձին կերպելու, կամ ուրիշ կերպուրների հետ իրեն կամեմունք:

«Բանջար», որ այս դաղթականների լեզուով ընդհանուր անուն չէ, այլ բանջարեղէնին միայն մի տեսակի, «թաթրանչ, «շոշանչ», «կարովմա», և «ծեթրին»—ահա ոռցանով սահմանափակուում է այն վայրի բանջարների թիւը. որոնք գործ են ածում այս կողմերի հայերի մէջ իրեն առանձին ուտելիք, կամ բռնուածքի նիւթ և կամ իրեն համեմունք: Բանջարը կամ տապակում են, կամ նորան սամսալի մէջ են դնում, թաթրանը ուտում են հում-հում, վերալից կաշին հանելով, կարգաման ուտում են հացով նոյնպէս հում-հում, շոշանը բռնում են աղաջրով և պահում ձմեռուայ համար, խոկ ծեթրինը կամ ծեթրինը մաքրում, ծեծում, մանրացնում և պահում են իրեն համեմունք «Թաթրար բեօրէկի և «խաշըխ բեօրէկի» կոչուած կերպակուրների համար, որոնք նախիջնանցոց ամենասիրելի խորտիկներն են:

2<sup>։</sup>նայելով բանջարեղէնի և ընդհանրապէս գործածելիք կանաչեղէնի աբսպիսի սղութեան, այնուամենայնիւ նախիշնոցիք իւրեանց սեղանը պատրաստում են շատ վայելուչ կերպով: Նոքա սեղանի վերայ սոլորաբար դնում են, բացի զանազան սնկի ջրից պատրաստած պատոց ապուրներից, «սիսուիթօփիլից» արևածագիրի կամ, մանանեխիլի իւրով տապակած կարտոֆիլից և այլիւրաշաղախ արած ու տապակած սնկից, և ձիթապուղ, խաշած ու մանրած սունկ, կապառ, խաշած, որորած ու պաղեցրած բակլայ, բոկրած կաղին», չոր մրգեղէն, «հալուար» և անուշահամ «սարալլը»:

Պասի երկուշարթին կոչուում է «բակլայ-խորան, այսինքըն բակլայ ուտելու օր, կամ պատոց կերպակուրների ուտելու օրերի սկիզբը: «Բակլայ-խորան» կատարելու և առհասարակ միմեանց ալցելելու ու «ախացքը» շնորհաւորելու սովորու-

թիւնը քաղաքում արդէն վերացել է, իսկ գիւղերում դեռ կատարուում է բոլոր ճշգութեամբ: Գիւղացիք արդ օրը հաւաքուում են միմեանց տուն, շնորհաւորում են միմեանց «ախացքը», ուտում, խմայ են, քէֆ են անում, պասը սկսելով ու «Լուսացրուք»-ը ըրբացարութիւն հանդէսը կատարելով: «Բամլայինարան» գիւղերում տնէց տուն շրջում են ցիգանները և ժողովում են ուսուաց կիրակուրների մնացրողը, կամ, ինչպէս գիւղացիք ասում են, «խալխան-խալխանը», պասի երկուշարթին էլ կախում են առաստաղներից ու սենեակի անկիւններից աւանդական Սովուն եօթը փետուրով, որ այս գաղթականները կոչում են «Մըռամըռաս», որով վախեցնում են երեխաններին, սասատում են պասը լուծողներին:

Մըռամըռասի փետուրները սովորութիւն կայ զարգարելու գոյնդգոյն ժապաւէններով: Ամեն մի շաբաթուայ փրցնելու փետուրն ունի իւրեան յատուկ զոյնի ժապաւէնը: Հաստինը կարմիր է, ծաղկազարդինը կանաչ, Լուսաւորչինը սպիտակ, իսկ միւս շաբաթներինը սև: «Մէջինքին», որ գալիս է շաբաթուայ մէջտեղը, ուրեմն և փետուր փրցնելու օր չէ, սովորաբար կտրում են արդ շաբաթը փրցնելու հերթական փետուրի կէսը, որով, չի հարկէ, ուզում են ցոյց տալ, թէ պասը կէս է եղել: Նոյն «մըռամըռասին» սովորութիւն կայ մի առանձին տեսակ հաց պատրաստելու և աղցաններին բաժանելու: Այդ հացը, որ կլրուակ, մէջը ուռուցիկ ձև ունի և որի երեսը մեղրաջուր է քսուում, կոչուում է «պալից»: կան այնպիսիներն էլ, որոնք «պալիցի» տեղ պատրաստում են «Չորակ», որ նոյն պալիցի ձևն ունի, միայն որ երեսը մեղրաջուր չի քսուած:

### ՆԾՂԿԱԶԱՐԴԻ ԱԽԾԳ-ՌԻՄԲՈԹ ԵՒ ԶՈՏԻԿ

Նաղկազարդին նախիջեանցիք ասում են «Զառգարդար» և «Նառկուորունք»: Առաջինը նոյն՝ ծառզարդար, բառն է որ սովորաբար դործ են ածում շատ տեղերում հայերը, երկրորդն առաջ է եկել ուռ կոտրատելու ու բաժանելու գործածութիւնից:

Օրհնած ճիւղերը, ինչպէս ամեն տեղ, արտեղ էլ հիւսում, փաթաթում են միմեանց հետ, կազմում են մի մեծ օդ բռնելու տեղով և պահում են ամրողջ տարին։ Դիւղացիք արդ ողերի միջով անց են կացնում վառեակներին և առհասարակ հաւ ու ճիւր, որ նոքա դէր լինին, որ «Ծուլլու զոշու» լինին, ինչպէս ասում են նոքա։ Երբ որ սաստիկ քամի է բարձրանում և փոթորիկ է լինում, նախիջևանցիք նոյն օրհնած ճիւղերը խաչաձև միմեանց վերալ դնելով ու համբուրիլով, ձգում են կրակը և ալրում, հաւատացած լինելով, որ դորանով փոթորիկը կ'զագարի, կ'վերջանար Սովորութիւն կայ օրհնած ճիւղերով միմեանց մէջքի զարնելու և ասելու, «մէջքը տեղը-կամքը տեղը»։ Աւագ-հինգշաբթի լուս Աւագ-ուրբաթ գիշերը, որ ուրիշ տեղերում կոչում է «Զարչարանաց զիշեր» կամ «Սիի գիշեր», «Նախիջևանում կոչում է «Տէր-Մեղակի գիշեր»։ Նախիջևանի բոլոր եկեղեցիներն էլ մեծագին, ուկեզս, զարգարուն դագաղներ ունին, որ Աւագ-ուրբաթ օրը դնում են եկեղեցու մէջտեղը և նոյն վերալ յարգարում Քրիստոսի գերեզմանը։ Դապաղների վերալ ձգուած է լինում ուկեթել և արծաթաթել ու շուցիկ հիւսուածքով խաչելութեան պատկերը, որ առանձին պատուանդանի վերալ դնելով, շքեղ թափօրութ ուրբաթ երեկոյ հանում են եկեղեցուց և ահազին ամրտխով շըջապատուած շըջեցնում են եկեղեցու չորս կողմքը։ Ճատ հետաքրքրական տեսարան են ներկայացնում արդ թափօրները։ Եկեղեցու զանդակները, որ ալսուել հնչեցնում են ոչ զորդ, հայկական եղանակով, այլ ուստական ձևով ու եղանակով, զորանջում են, քը-շացները զնդզնդում են, ահազին զամբարները, որ երկու մարդ տանում են թափօրի առաջից, փայլիրում են և ազօտ լոյս են տարածում խաչ ու խաչվառի և հոգևորականների շքեղ ըդգեստների վերալ, իսկ աղօթողները ջերմեռանդութեամբ խառնում են խաչելութեան պատկերի չորս կողմը, աշխատելով, զոնէ, մի մատի ծալրով էլ է կայել պատկերի պատուանդանին։

Ճատիկի պատրաստութիւնը սկսում են տեսնել վերջին շարաթուայ հէնց սկզբից, և արդ շարաթուալ ամեն մի օրը համարեա ունի իրան յատուկ պատրաստութեան առարկան կամ

զրադմունքը։ Երկուշաբթի սրբում մաքրում են տները — «տուն գույս կ'ձգեն», Երեքշաբթի և Չորեքշաբթի և Փատթիր են պատրաստում, Հինդշաբթի հաւկիթ են ներկում, Ուրբաթ զատկանաց — «պատքառ» են թխում և ձարաթ օրը ձբագալոցի՝ ընթրիքը յարգաբում են ըստ ամենայնի յար և նման ծննդեան ձբագալոցի ընթրիքին։

«Փասթիրն» ուտաց քաղցր խմորից պատրաստում մի տեսակ թխուածք է, որ պատկի ձև ունի և ներկարացնում է Քրիստոսի վշեայ պսակի լիշտակալը. ժողովուրդ չ'հասկանալով բառի նշանակութիւնը և թխուածքի խորհուրդը, աղուազել է նորան և, վորիանակ ոՊոսկիրա ասելու, ասում է «փասթիր»։

Հաւկիթը սովորաբար շատ է ներկուում, որովհետև նա հարկաւորում է ոչ թէ ձբագալոցին թաթախելու համար և դասոկի սեղանը դարդարելու համար, այլ և զատկին յաջորդող առաջին երկու շաբաթը հիւրերին այցելութիւն անողներին հիւրասիրելու համար։ Նախիջևանցւոց մէջ կարծիք է տարածուած, թէ զատկական հաւկիթը շատ ու շատ երկար է դիմանում, չի վիշացնուում։ Հաւկիթ խաղալու կամ կուռեցնելու սովորութիւնն արև գաղթականների մէջ համարեա թէ խոպավերացել է, կամ, զուցէ, հենց սկզբից էլ չի եղել։

Զատկի «Անսուխ» սովորութիւն չկայ։ Ախշդ է, նախիջևանցիք էլ մատաղը սիրում են և յաճախակի եկեղեցիների ու վանքերի գուներում մատաղ են բաժանում, բայց ուրիշ տեղերում այնքան ընդունուած ընդհանուր մատաղ մարթելու, եկիելու և եկեղեցիների բակում և աղապիհ կամ սիրոյ սեղան պատրաստելու ու ուտելու սովորութիւնն խոպավագրացել է։

Զատկին, երբ ձիւները հալուում եմ, գետինը տաքանում է, կանաչները ծլում են և երևում է «զատիկ» կաջուած կարմիր միջատը, նախիջևանցիք առնում են նորան, դնում իւրեանց ափի մէջ և հարցնում. «Խոկմի ճանքան մըն է», և Դի հարկի, պատասխանը չեն ստանում, որովհետև զատիկը խուճապելով դէսուզէն է փախչում։ Այս սովորութիւնը պատմական հիմք ունի և շատ գեղեցիկ բնարոշում է այն անեղանելի դը-

րութիւնը, որի մէջ ընկել են դաղթականներն իւրեանց գաղթելու առաջին տարին, երբ դեռ ոչ արտոնութիւնների հրավարտակն է ստացուած եղել, ոչ էլ նոցա բնակութեան համար մի որաշ տեղ է սահմանուած եղել: Փախչել, վերադառնալ կարելի չի եղել, որովհետեւ խիստ հակոզութիւն է եղել, մի հաստատոն բնակութեան տեղ էլ չեն ունեցիլ. նոքա խուճապել են, ինչպէս զատիկը ձեռքի ափի վերայ շուարած դէս ու դէն է փախչում ու ճանապարհ չի գտնում ազատուելու:

Առհասարակ «Խուճմ-աղասիի»<sup>1)</sup> մասին զաղթականների մէջ շատ լիշողութիւն չի պահպանուել: Բացի Պալմի ճանապարհը զատիկոց հարց ու փորձ անելու սովորութիւնից և մի քանի մանդր-մունդը լիշողութիւնից, պահպանուել է և հետևալ փոքրիկ երգը, որ անհասկած զաղթականներն իւրեանց հետ Պալմից են բերել նախիջևան, որովհետեւ երգի բռվանդակութեան հիմքը կաղմող դործողութիւնը հէնց կատարուում է Պալմում:

Հենդեկի ինկալ, սանդր գտայ,

Սանդրը տարի, չորնին տուի

Չորանը ինձի գառը տուեց,

Գառը տարի աղավիս տուի,

Աղաս ինձի չա մի տուեց,

Չայ մին հեծայ, Ղարասու դնացի.

Ղարասու թաթաւ կուզար,

Թաթաւ կուզար, մէլ կուվազեր,

Երկու աղջիկ մէցը կանէին —

Մէկը մեծ էր, մէկայը պղտիկ.

Մէծին անցայ, բարե տուի,

Պղտին ալ մայի էդայ,

Եռանց սորիկ խայն էդայ.<sup>2)</sup>

## ԿԱՆԱԶ ԿԻՒՐՈԿԻ ԵԽ 204

Զատիկոց լետոյ, կանաչ կիւրակէին նախիջւանցիք սովորութիւն ունին դաշտ դուրս գալու և զրօսանք կատարելու: Քաղա-

<sup>1)</sup> Խուճմ-աղասիի=Պրիմի թերակղզի:

<sup>2)</sup> Այս երգը հաղորդել է մեղ օր. Թագուհի Զուբարեանը:

քացիք սովորաբար դնում են զրօսանքի «Սխսալի-Դիերէ» կոչուած ձարակը, որ զտնուում է քաղաքի հիւսիս-արևելքան կողմը և որի միջով հոսում է մի սառնորակ առուակ և գնում, թափուում է դօն գետը: «Ախսալի-Դիերէ» անունը լիշեալ ձորակը ստացել է առուակից, որ, ինչպէս երևում է, հին ժամանակ-ները կոչուել է տաճերէն «Ոկ-Սուչ», իոկ յետոյ թուրքաց լիդուին անտեղեակ ժողովուրդի բերանում տղաւաղուել, դառել է «Ախսայչ» Գիւղացիք էլ նոյն զրօսանքը կատարելու համար դուրս են դալիս իւրեանց գիւղերը շրջապատող արտերն ու դաշտերը: Այդ զրօսանքի օրն է, որ աղջիկները և կանաչք սովորաբար քաղում են Ճեթրինը, բերում տուն, մաքրում և պահում ձեռնուայ համար: Ճեթրինը գաղթականները շաղ են տալիս վերսիշեալ «Խաշըխ-բեօրէնի» և «Ժաթար-բեօրէնի» կերակրների վերայ, որոնք, ինչպէս ասել ենք, նախիջևանցոց սիրելի խորտիկներն են:

«Խաշըխ-բեօրէնին», որին Բեսսարաբցիք «Ականջապուր» հայերէն անունն են տալիս, մի տեսակ ապուր է, որ սրաստ-րաստուում է մածնախառն մոխ արգանակից և ականջի ձևով շինած «բեօրէնիներից», արխինքն մաով խճողած խմորիկներից, իոկ «Ժաթար-բեօրէնին» բաղկացած է միայն մածնախառն և իւղախառն բեօրէնիներից, առանց արգանակի: Այդ բեօրէնի-ներով սովորութիւն կայ բաղդ փորձելու: Ականջիկներից մէկի մէջ դնում են մի միխակի հատիկ, և ում որ ուսելու ժամա-նակ դուրս է դալիս այդ միխակը, նա տան մէջ բաղդաւորն է համարուում: Խախիջևանում ձեռուը շատ երկար է տևում, և թէ և ձիւն շատ չի դալիս և եկածն էլ շուտով հայտում է, բայց ցուրտը խիստ երկար է շարունակուում: Գարուն, կա-լելի է ասել, որ համարեալ թէ չ'կայ, այնքան աննկատելի է անցնում տարուայ այդ գեղեցիկ եղանակը դօնի և Ազով ծո-վի ափերում: Տաքերն այնպէս անակնկալ կերպով են սկսուում, բանկարծակի այնպիսի երաշտութիւն է լինում, որ կարճ մի-ջոցում զիջացած հողը ցածաքում է, նոր ծլած ու կանաչած արօտը թօշնում, զետինը ճագնգում և հացահատիկների ար-մատները բացուում ու աբրուում են: Այս հէնց այս պատճա-

ուոլ սովորութիւն է դարձել թէ գիւղերում և թէ քաղաքում ամեն տարի անդաստան անելու, օրհնելու հոդն ու ջուրը և Աստուծոյ գթութիւնը խնդրելու երկիր զովացնելու համար: Այդ հասարակաց մաղթանքն է ահա, որ ծնկաչոք կատարուելու պատճառով ժողովուրդը կոչում է «չոք» և որ նամանաւանդ քաղաքում կատարուում է շատ հանդիսաւոր կերպով: «Չոքի» նախընթաց օրը, որ սովորաբար լինում է շարաթ, երեկոինան հանդիսով և խուռան բազմութեամբ բոլոր եկեղեցիների մասունքները բերում են Ս. Լուսաւորիչ մայր-եկեղեցին, և բաղմեցնում սեղանի վերան և հոկումն կատարում — «Եկեսցէ» ասում: Միւս օրը — Կիւրակէ — քաղաքի բոլոր հոգեւորականութիւնը հաւաքառում է մայր-եկեղեցին և հանդիսաւոր պատարագ մատուցանելոց լիտոյ, խաչ ու խաչլառով, մասունքներով դուրս են գալիս եկեղեցուց և չորս կողմը ծնկաչոք մաղթանք կատարում: Նոյնը կատարում են և գիւղացիք, իւրեանց գիւղերում զանուած ջրերը օրհնելով, դաշտ դուրս գալով, օրհնած ջուրը շախ տալով և «Ժամանակի մատաղ» անելով: Զալթրցիք արդ ժամանակ օրհնում են իւրեանց սուրբ համարուած «Սալլի-Սուռ» ջրհօրը, իսկ Թոփիտեցիք իւրեանց գիւղի մեծ աղբիւրը — «չոփրախը»:

### Վ Ի Շ Ա Կ

Նախիջևանցիք էլ, ինչպէս պատմում են ծերունիները, հին ժամանակները սովորութիւն են ունեցել ամեն տեղ ընդունուած կերպով վիճակ ձգելու և դորանով իւրեանց բաղկը փորձելու:

Համբարձման տօնի նախընթաց օրն եօթ աղջիկ լուս ու անսես զնում են եղել ջու հանելու եօթը ջրհօրից և ծաղկիւ-փնջերով զարդարելով ու մետաքսէ կտորով ծածկելով ջրամանը, տանում են եղել նորան մի ծառի տակ և պահում պարտիզում: Միւս օրը պատարազից լիտոյ հաւաքառում են եղել սղջիկներ և կանալք և նստելով պարտիզում կանաչի վերայ և սավորը

մէջ բերելով, մէջը ներկայ գտնուողներից ամեն մէկը մի որ և է իր է ձգում եղել: Այնուշետեւ կանանցից մէկն իրը նախերդանք ասում է եղել.

«Վիճակ, վիճակ»,

Վիճակի լիշտակ»,

Վարդ, մանուշակ»,

«Սսի կօճակ».

Խօսքերը, և սկսում է եղել վիճակհանութեան կարգը: Այս մէկը մի մի տուն վիճակի երգ է ասելուս եղել և հանել սափորից մի իր. որի ձգած իրը դուրս է զալիս եղել, նորան էլ յարմարեցնում են եղել երգի իմաստը:

Այժմ արդ հին, գեղեցիկ սովորութիւնը քաղաքում խապառ վերացել է, վիճակի երգերն էլ մոռացուել են և պահպանուել է, առն էլ միայն մասամբ, դիւզերում: Մինչև ցալսօր դեռ զիւզացի կանանց և աղջիկների բերանում պահուել են վիճակի արդ վաղեմի երգերից մի քանի տուն քան, որ մեզ յաջողուեց մի պատահ ասել տալ և զրի անցնել:

1

Կանանչ դումզան <sup>1)</sup> բռնէի,

Կանանչ պաղյաց ջրէի,

Բիլրիլ ձի հեծունէին,

Ըուտ մուրատիս հասցունէին:

4

Հերու ունէի մէկ գօսի,

Սս տարի ունեցաչ երկու գօսի

Երկուսն ալ տասու. [խուշ, <sup>2)</sup>]:

Տուշմանիս աչքը փուշ:

5

Ես ձագ էի ճըտվըտայի,

Օսկի ոինի կըտկըտայի,

Մարդարիտէ թել շարէի,

Ալեմին <sup>3)</sup> Սուլթան ըլլայի:

Օսկի կթիչք բռնէի,

Երծաթ մակաթ զարնէի.

Մընոց տանէի,

Բարնոց բերէի:

6

Մանուկն էր մօրին դնաց.

Օսկի կացինը ձեռքը.

Քանի քամին քարին կ'զարնէր,

Կ'սաղար լուսինկան նոցը:

Վերէն ինիւա մէքամ բարիք,

Էկաւ, սեղանիս դուռը կայնեցաւ,

Սուրբ սեղանիս դուռը բացուեցաւ.

Տաճարիս դուռը բացուեցաւ:

<sup>1)</sup> Դրւմզան=ջրուման: <sup>2)</sup> Ալեմ=աշխարհ: <sup>3)</sup> Տուտուխուշ=զրախառաւ:

7

Մինտար մինտարին վրան,  
Հրամէ, նստի վրան.  
Ջուռ առ ու շուռ խարուլ արա,  
Զիդայ չոր քամին վրան:

8

Վարի տունը գնացի,—  
Բամբակ գզած, դրած.  
Վերի տունը գնացի,—  
Հաց էփած, դրած.

9

Էլլայ, նայեցայ աշխարհիս վրան,  
Տատուերկու լուծ լծուած էր.  
Ան ալ իմիս՝ նասիսիս<sup>1)</sup>) վրան,  
Խմիս պաղդաւորութինիս վրան:

10

Բոյսը էրկան է, էրկան է,  
Հալաւս տանա էրկան է.  
Խանէ խանէ քալէի, <sup>2)</sup>  
Թօօզը էրկինք հանէի: <sup>3)</sup>

Գաղաքում այժմ նոյն խոկ չամբարձման հինգշարթի օրը  
միմեանց տուն են հաւաքում աղջիկներն ու երիտասարդները  
և թերթիկների վերայ զրում են զանագան սրբերի ու սրբու-  
հիների անուններ: Եյնուհետև վիճակահանութեան պէս հա-  
նում են թերթիկները. ում ինչ սրբի անուն զրած թերթիկ  
է զուրս զալիս, նա էլ գնում է ո. չամբարձման եկեղեցին և  
նոյն սրբի պատկերի առաջ մոմ է վառում ու աղօթում, որ  
իւր գմուրատը՝ կատարուի: Այդպիսի վիճակահանութեան ժա-  
մանակ բաճախակի այնպէս է պատահում, որ ներկայ զտնուող  
և վիճակահանութեան մասնակցող երիտասարդներին դուրս է  
զալիս ներկայ գտնուող և վիճակահանութեան մասնակցող աղ-  
ջիկների անունով սրբուհու անուն և ընդհակառակը: Դորանից  
դուշակում են, թէ ում է վիճակուած, որին հարունանալ ու փե-  
սաբանալ: Վիճակի արս երկրորդ տեսակը, որ այնքան քիչ է  
կատարուում, որ կարելի է նոյնպէս արդէն վերացած համա-  
րել, կոչուում է «Փոքր վիճակ», հակառակ առաջին տեսակին,  
որ կոչուում է Մեծ-վիճակ:

<sup>1)</sup> Նասիս=բաղդ: <sup>2)</sup> Խանէ խանէ քալել=փողոցէ փողոց շրջել: <sup>3)</sup> Վիճակի այս երգերի մի վարիանտն էլ տպագրուած է «Խախ-  
չևանսի Շօվոր»-ում.

### ՎԱՐԴԱՎԱՐԻ Ս. ՅԱԿՈՎԸ ԵՒ ՈՒԽՏՈՒՆԱՑՈՒԹԻՒՆ

Վարդավառին նախիջևանցիք էլ «Վարթէվոր» են ասում։ Միմեանց վերայ ջուր սրսկելու-և վարթէվոր անելու և կամ «վարթէվոր խաղաղու» սովորութիւնը քաղաքում բոլորովին վերացել է և պահպանուել է միայն զիւղերում։ Վարդավառին կատարուում է նախիջևանցոց տեղական ամենամեծ ու խոտանացութիւնը դէսկի Ս. Խաչ վաճքը։ Առհասարակ նախիջևանցիք, ինչպէս և ուրիշ տեղերի հայերը, շատ են սիրում ու խոտանացութիւն և կատարում են նորան ամեն տեղ ընդունուած կերպով։ Նոքաօրերով մնում են ուխտի տեղերում, մատաղներ են մորթում, ուսում, խմում, պարում են և քէֆ ու ուրախութիւն անում։

Բացի սովորական մատաղացուց-ոչխարից, նախիջևանցիք սովորութիւն ունին մատաղ անելու և աքաղաղներ և արդ մասնաւորապէս ս. Յակովբայ տօնի օրը։ Առհասարակ ս. Յակովբայ տօնի նախընթաց օրն ամեն տուն դնում է այնքան աքաղաղ, որքան տանն արու անդամ կայ, միսած դիտցիկ մանուկներից և վերջացած մեծ մարդկանցով ու ծերունիներով։ Հետաքրքրական պատկեր է ներկայացնում արդ օրը քաղաքի շուկան. աքաղաղ է, որ ամեն կողմից բերում են քաղաքի ծախօլու, որովկետն, բացի հայկական գիւղերից, շրջակայ բոլոր զիւղերում էլ յայտնի է լինում, որ այդ օրը հայերն աքաղաղ են գնում մատաղ անելու, ուրեմն և մեծ պահանջ կայ նախիջևանի շուկայում։ Աքաղաղների կոկողը, «մաթուապագների»<sup>1)</sup> իւրեանց «խորողներին» տուած գովաստնքը, գնողների սակարկութեան ձախները մարդու ականջ են խլացնում։ Ամեն տեղ միայն աքաղաղ է երեւում—ուայերի վերայ, ևսուերի վերայ առեւտուր անողներից ձեռքին, գետնի վերայ թափած, կողովների մէջ՝ ամեն տեղ միայն աքաղաղի մասին է խօսքը, ամեն կողմից միայն «խորող» խօսքն է, մարդու ականջին հաշնում։

Միւս օրը—տօնի օրը մատաղացու աքաղաղներին տանում

<sup>1)</sup> Մաթուապագ կոչուում են այն մանրավաճառները, որոնք զիւղացիներից ապրանք էժան գնով առնում են ու ձեռաց թանդ գնով վաճառում։

են եկեղեցիների բակը, մորթիկ են տալիս, կամ ինքեանք են մորթում և տուն ըերելով ու խաշելով, մաս-մաս են անում ու ոռվորական մատաղի պէս հաց վերայ դրած բաժանում դրացիներին:

Թէ ինչից է առաջ եկել աքաղաղ մատաղ անելու արդ սովորութիւնը յատկապէս ո. Յակովիսայ տօնին, — նախիչև անցիք ինքեանք է չ'զիտեն: Նոքա արդպէս իւրեանց հալբերից տեսել են, արդպէս էլ աւանդարար կատարում են: Ճիշդ է, ծերերից ոմանք արդ մասին պէս-պէս պատմութիւններ են անում, բայց, մեր կարծիքով, դոցանից և ոչ մէկը չի բացատրում արդ սովորութիւնը. Պոքա — արդ պատմութիւնները բոլորը եւս յիտոյ գտած — հնարած բաներ են և ցոյց են տալիս աւելի ձգտումն մեկնելու արդ սովորութիւնը, քան թէ խակապէս մեկնում են: Ոմանք, օրինակի համար, պատմում են, թէ երբ որ ո. Յակովիք, Մծրնայ հայրապետը վախճանել է, նորա դերեզմանի վերայ այնքան ոչխար են մատաղ արել, որ ձգուած փորութիւն և աւելորդ մասերի նեխելուց և գարշահոտութիւնից ժանտախտի պէս մի վարակիչ հիւանդութիւն է առաջ եկել և ոկուլ կոտորել ժողովուրդը: Հասկացող և իմաստուն մարդիկ ցաւը վերջանելու նպատակով ժողովրդին խորհուրդ են տուել, ոչխարի փոխարէն, աքաղաղ մատաղ անելու, հասկացնելով; Թէ սուրբը ոչխարի մատաղ չի ընդունում: Ոմանք էլ պատմում են, թէ մէկ անգամ ո. Յակովիքը զնում է մի տեղ և տեսնում է, որ արդ տեղի ժողովուրդը տանջուում է մի տեսակ հիւանդութիւնից: Սուրբը պատուիրում է աքաղաղի միս տեղ, և բոլորեքեան առողջանում են, ուստի և երբ վախճանում է նա, սովորութիւն է զառնում ՚ի պատիւ նորա աքաղաղ մատաղ անելու, և այն և այն:

Բացի Ս. Խաչ վանքի մեծ ուխտագնացութիւնից, նախիջնանցիք ունին այլ ևս բազմաթիւ սրբատեղեր, որոնց ուխտերը նոքա կատարում են մեծ ջերմեռանգութեամբ: Համորեա ամեն մի եկեղեցի, թէ քաղաքում և թէ զիւղերում ունի իւր առանձին ուխտի օրը: Ս. Խաչ վանքը, բացի Վարդավարաբցից, ունի այլ ևս ուրիշ ուխտի օրեր: Թափտի զիւղի «Սալին-Սուս» կոչուած աղբիւրը, որի չուրը բուժիչ գորութիւն ու-

նի, որովհետև զիւղացիներից մէկի տեսիլքով լուս է իջել նորա վերայ, և որի վերայ մատուռ է շինուած, ունի իւր ուխտի օրը. Ս. Խաչի մօս գտնւած «Սալլիս-Սու» տղրիւրը, որի վերայ նորնպէս մի մատուաձեւ շինութիւն կայ, դարձնալ ուխտատեղի է և վանք ուխտ զնացողներն այցելում են և արդ աղրիւրը: Մեծ հռչակ է վայելում իրբն ուխտատեղի նամանաւանդ Նիսութիւայ զիւղի ս. Կարապետ եկեղեցին, որի ուխտաւորը և մատաղը թէ քաղաքից և թէ զիւղերից տարին տասներկու ամիս անզակաս են լինում. մեծ հռչակ է վայելում իրբն ուխտատեղի և քաղաքի ս. Գէորգ եկեղեցին, որի ուխտը կոչում է «Խրտրելլեղ», կատարում է ուխտակնացութեան բոլոր պարագաներով և տեսում է երեք օր: Այդ ուխտատեղիները, բացի նորանից, որ նոքա բաւականութիւն են տալիս ժողովրդի ջերմեանդութեան, այլ և ծառայում են իրեւ աղջիկտեսի տեղեր նախիջևանցի երիտասարդների համար. նաև նաւաւանդ այդ նպատակին ծառալեցնում են «վարթէ վորը» և «խրտրելլեղը»:

Նախիջևանցիք հեռաւոր ուխտագնացութիւն կատարում են, զնալով Երուսաղէմ, Մշոյ ս. Կարապետը և ս. Էջմիածին: Նոքա շատ են սիրում «Հատիկ» զառնոլ, ուստի և խրաքանչիւր նախիջևանցու մեծ բաղձանքն է, երբ նա հասակն առնում է, գնալ ս. քաղաքը, տեսնել ս. գերեզմանը, ս. զիխաղիրը և արժանանալ ս. լուսի տեսութեան: Առվորաբար զնում են բարեկենդանին, մնում են ս. Ցակովրում ամբողջ Մեծ-պատը, տեսնում են զատկական հանգէսները և վերադառնում են տուն, բերելով իւրեանց հետ «Քետ բորգանայ» և ուրիշ սովորական բաներ: Ս. Էջմիածին նոքա գնում են առհասարակ մեռնօրհներ, քին Հայաստանեաց եկեղեցու արդ նուրբական հանդիսին ներկայ դաշտելու, ս. մեռնի կաթոսան համբու բելու և աչքով ս. մեռնի եփ եկածը տեսնելու, իսկ ս.-Կարապետ զնում են նշանու ածները, որովհետև նախիջևանցի կտրիններն իւրեանց «մուրազին» հասնելու համար Համբարեան թէ միշտ ուխտած են լինում ս. Կարապետի գերեզմանը համբուրելու Մինչև ցարոր զեռ ծեր մարդկանց բերանից կարելի է լսել «խարիսկ Մելքոն».

կոչուած կտրմի երդը, որ ուխտած լինելով ո. Կարապ' ու ուխտ դնալու և հիւանդութեան պատճառով չկարողանալով կատարել իւր ուխտը, տանջուռում ու հալումաշ է լինում։ Վերջապէս չկարողանալով դիմանալ, նա հիւանդ-հիւանդ ճանապարհ է ընկնում դէպի Հայաստան իւր կտրիմ ընկերների հետ, բաց ը հասնելով իւր «մուրատին», նա հոգին աւանդում է Թիֆլիսում, կտակելով, որ իւր կտրիմ ընկերները, զոնէ, «մուրատը», արքինքն իւր ձին տանեն ո. Կարապետի դրանը կապեն։

Սխալ առքի ցաւ քաշիլ էր խարիսկ՝ Մելքոնը,

Ա. Կարապիս ուխտ արիլ էր խարիսկ Մելքոնը.

Ձիերս հեծանք ճամփրվեցանք, գեղէն չէթ՝<sup>1)</sup> էլլանք.

«Ճիմալ, աղա, յիմալ, աղա, ինքդ երթացիր»։

«Գնա, Մելքոն, զնա, Մելքոն, ուխտ կատարէ»։

«Կալսէ գէնկուր, <sup>2)</sup> կուպուր խամշիդ, <sup>3)</sup> մի մնալ հայիսէն»։

Կախոցի գէնկուր, կուպուր խամշիս, հասաց նախշըլվան։

Ճամփրվեցանք, ճամփրվեցանք խաղ ու խունդումով,

ճամփրվեցանք մինչեւ թամող՝<sup>4)</sup> խաղաղ-խնդալով։

Թամոդէն էլլանք, Քափքազ հասանք, ու քերս ուռեցաւ,

Քսփքացէն էլլանք, սարը հասենք, սիրտս ուռեցաւ,

Սարէն էլլանք, Թիմիլիլ հասանք, մէկ բան յիմացաւ,

չայ աղաներ, չայ աղաներ, ճարիս ճար գտիք»։

Կրկու տղաք խօսք մէկ էդանք, բօշտա բռնեցինք,

Մինչ որքի բօշտան ալ էկաւ, Մելքոնը լմնցաւ։

Յիսուն չորս առխատաշներս՝<sup>5)</sup> լաց-գոռում էղանք,

Մենք փորեցինք, մենք թաղեցինք մէկ հայ տէրտէրով։

Յիսուն չորս առխատաշներա չորս դին փաթթաց։

Յիսուն չորս առխատաշներս էլլանք, գնացինք։

«Մուրաստ տարէք, ո. Կարապետին դուռը կապեցէք»։

«Բայն կանիք Խաչիկ ախրօսը և բարակիս»։

«Բարեւ կանիք Խաչիկ ախրօսը և մամացիս»։<sup>6)</sup>

1) Խարիսկ-առաջատար։ 2) Ջէթ-դաշտ։ 3) Զէնկու-առապանդակ։

) Խամշի-յարսկ, 5) Թաթ կու-ձաշնա, 6) Առխատաշ-ընկեր։

7) Այս երգը մեզ հաղորդել է պ. Սերգի Զաթ պլաշեանը։ Աս, ինչու սերեւմ է մաքից, խանգարուած և պակասուոր է։

Ս. Կարապետի ուխտուոր կտրիհներից է Մ. Նալբանդյանը՝ «Մինին խօսք, մինին հարս» վեպի դլխաւար հերոսը, որ նշանուած լինելով և իւր ոմուրատին հասնելու համար ս. Կարապետին ուխտ արած ու գնացած լինելով, մինչև որ վերադառնում է ուխտից իւր նշանածին արդէն ուրիշին հարս եղած է զտնում։ Խոյն վեպի մէջ հանգուցեալ հրապարակախօսը նկարազրել է, ՚ի միջի այլոց, և նախիջեանցւոց Ս. Խաչի «Պալրիս-Սոլին», ուխտ գնալու և սուրբ ազգիւրի մօտ զդունուած ծառերի վերայ հնութիներ փաթաթելու, իրբև իւրեանց ցաւերն այնտեղ թողնելու նշան, սովորութիւնը։

Տացի այս ուխտագնացութիւններից, նախիջւանցիք կատարում են և մի ուրիշ ուտագնացութիւնն. նոքա երբեմն ուխտ են գնում և Ռգովի ավիին գտնուած Մարինապօլ յունարքական քաղաքի Տիրամօր հրաշագործ պատկերին։ Այս վերջին ուխտագնացութեան սովորութիւնը նախիջևանցիք բերել են իւրեանց հետ Ղրիմից Մարիստապօլ քաղաքը, ինչպէս յարտնի է, հիմնարկուել է նախիջևանի հետ միասին յոյների ձեռքով, որոնք հարերի հետ միաժամանակ նոյն պայմաններով և նոյն հանգամանքերի մէջ դուրս են եկել Ղրիմից և գաղղթել Ռուսաստան, բնրելով իւրեանց հետ իւրեանց ամենամեծ սրբութիւնը՝ Տիրամօր հրաշագործ պատկերը։ Ղրիմի յունաց ս. Ռուսուածանին վանքը, որտեղից հանուած է արդ պատկերը, մինչև ցայսօշ ևս գորաւթիւն ունի և գտնուում է Բախչիսարայից  $1\frac{1}{2}$  վերաստ հեռաւորութեան վերայ «Քըհուդ-կալէ» կոչուած կարայիմ հրէաների աւերակ քաղաքի մօտ։ Վանքը փորուած է միապաղտ ապաւաժի մէջ մի լեռնացքում, որ վանքը հետ միասին տեղացիները կոչում են «Մարիստա»։ Վանքի հիմնարկութեան մասին պատմում են հետևեալը։ Ժն դարի կիսում թաթարների մայրաքաղաքը Բախչիսարայ տեղափոխուելու ժամանակները լեռների վերայ յանկարծ յարտնուում է մի վիշապ, որ սկսում է լաֆել շըշակայ յոյների բոլոր անասունները և մեծ սարսափ է ձգում բոլորի վերայ։ Միամիտ ժողովուրդը միջոց չունենալով յաղթել վիշապին, սկսում է ջերմեռանգութեամբ աղօթել և Ռուսուածամօր բարեխօսութիւնը խնդրել

արդ չար գաղանի դէմ: Մէկ օր լանկարծ մի գօրեղ լոյս է երևում այժմ «Պարիում» կոչուած լեռնանցքի դժուարամատոց ապառաժներից մէկի վերայ և սպանութիւնները ու կոտորածները դադարում են: Քրիստոնեաններն աշխատում են բարձրանալ, լոյսի տեղը հասնել, բայց չն կարողանում, որովհետև ապառաժը բարձր էր և միապարզութիւնը նոքա ձեռնարկում են աստիճաններ փորելու և մեծ աշխատանք ու ջանք գրեծ դնելուց իմույ, բարձրանում են ապառաժի գաղաթը: Այդունք նոքա տեսնում են լոյսի տեղում մի սուրբ պատկեր և վիշապի դիակը: Պատկերն իսկոյն տեղափոխում են ականաւոր քրիստոնեաններից մէկի տունը, բայց նա քանից անգամ նորից վերադառնում է իւր նախկին տեղը: Այն ժամանակ ժողովուրդը սկսում է փորել ապառաժը և մի փոքրիկ մատուռ շինելով, զետեղում է նորա մէջ սուրբ պատկերը և եկեղեցին կոչում է ու. Աստուածածին, որովհետև պատկերի լայտութիւնն եղել էր օգտատոսի 15-ին:

Նախիջեւանցիք, որոնք զեա Արիմում բնակուելու ժամանակ սովորութիւնն են ունեցել ուխտ գնալու յև նաց սուրբ Աստուածածինը, նախիջեւան տեղափոխուրելոց իմույ էլ չն մոռացել նոյն սովորութիւնը և շարունակել են և մինչև ցալաօր ևս արունակ ու մ են «Պարիում» ուխտ գնալ:

Աւխտագնացութիւններին նախիջեւանցի զիւղացինների զըլիսաւոր գուարճութիւններից մէկն է գօտեմարտութիւնը, որ կօչուում է գգուռաշշ: Գուռաշը կատարում են զիւղացի կրտրիմնը և գորանով քաջութեան համբաւ են ձեռք բերում թէ իւրեանց համագիւղացինների, թէ բոլոր հայ զիւղացինների և թէ իւրեանց հարսնացւների ու հաւանած աղջիկների աչքին: Հանդիսաւոես ուխտաւորներից, զիխաւորապէս զիւղացիններից մի ընդարձակ կրկէսի մեռով շրջան է կազմուում, որի մէջտեղը զրուում է զոմշի զըուխ: Սսպարէդ են դուրս գալիս զուռաշ եկողները և պտոյս գալով զիսի չորս կողմը, աշխատում են լարմարութեամբ մէկզմէկի բռնել և գօտեմարտելով վայր զլորել ու չոքել հակառակորդի կրծքին, որ լաղթութեան նշանն է: Ցաղթողը ստանում է շրջապատրների խրախուսանքը ու դովասանքը և իրեւ յաղթութեան նշան տէր է գառնում:

գոմշի զինին, որ ոյժի ու քաջութեան է մըլեմն է։ Հին ժամանակները, երբ արդ օշներին սովորութիւնն է եղել և զոմէշ մորթել, ասպարէղ է հանուել և դոմշի թարբ զլաւևը և յաղթողն իւր յաղթանակն եղել, կերել է իւր համագիւղացիների, կամ, լաւ է ասել, իւր թաղեցիների հետ, և զուարճացի ու ուրախութիւն արել։ Խոկ այժմ, երբ արդէն զոմէշ մորթուում, ասպարէղի մէ ծուղղը սովորաբար զրուում է զոմշի զանցը և յաղթողը քէֆ է անում իւր թաղեցի կտրիճների հետ, որոնք մեծ պարծանք են համարում իւրեանց համար, որ իւրեանց թաղն է յաղթող գուրս և կել, և հպարտանում են միւս թաղեցիների առաջ։ Այդ քէֆերի ժամանակ յաճախակի կռիւ է պատահում յաղթուող կտրիճնի թաղեցիների հետ, որոնք, իր հարկե, նախանձում են չեն կարողանում դիմանալ և չ'պատասխանել իւրեանց հակառակորդների կծու ակնարկութիւններին ու սրաբանութիւններին։

Առհասարակ նախիջևանի զիւղերում թաշականութիւնը շատ զարդացած է և մահակարական կարիներ», որոնք յանախ վերջանում են տուր ու դմբոցալ, վիրաւորանքով և մինչև անդամ մարդասպանութեամբ, զիւղական կեանքի սովորական երեւոյթներց են։ Համտրեան ոչ մի քէֆ ու ուրախութիւն առանց կռիւ չի վերջանում։ Մի «մահակալից» պասկ է դնում հեկղեցի, միւս «մահակալի» երիտասարդները հաւաքուում են և կռիւ են սարքում պասկին մասնակցող երիտասարդների հետ։ Մի թաղում քէֆով, ուրախութեամբ «բարեկենանք են նստում», միւս «մահակալի», տղայքն այնպէս են վերաբերում, այնպէս են իւրեանց պահում, որ անպատճառ կռիւ է ծագում նոյցա մէջ։ մէկ մահակարում «բակլար-խօսքան» են կատարում, միւս մահակաբեցիք անպատճառ առիթ են որոնում խանգարելու ուրախութիւնը, որից վերջ ՚ի վերջով, հոյնապէս կռիւ է գուրս զալիս։

Յաղթանակը տանող և անբաղթ մնացող զգուաշշ եկողների անունները երկար ժամանակ մնում են ժողովրդի ընթանում և խօսք ու զրոցի առարկայ զառնում։ Հին ժամանակներից, օրինակի համար, պահուել է մի «կարճուկ» Մառթիւն անունով կտրճն անուն, որ միշտ յաղթող է եղել և որի մէջ-

քը, ինչպէս առում են, երբէք գետնին չի կափէ: Դորա-ալդ  
Մառթինի մասին մինչև անդամ երդ էլ է կապուել, որի մէջ  
ոկարճուկին շռաված գովասանքների հետ միասին կայ և  
սպուռաշիւ նկարագրութիւնը:

1

Էլի, մէզի, գացէք մէցրան,  
Խնչ այդպէս առաջն կուգան.  
Զարդ խամչին, տուն մի նամկր,  
Հոնէն այ կրնաց մէկր, <sup>1)</sup>  
Թօղ էլին կորիճւերը:

2

Ուր է գոմէշին կրոխը,  
Թօղ մէցրան <sup>2)</sup> գայ ուկցողը,  
Տէ, հածէ, տէվէ-խալտրան, <sup>3)</sup>  
Աթխուուխս, <sup>4)</sup> այս երխան. <sup>5)</sup>  
Հայրա տուն, կտրմուկ Մառթին,  
Խնչու կը նամիս հալիսին: <sup>6)</sup>

3

Խշուէ կարմուկ Մառթինը  
Կայնեց Ալորին առջևը,  
Էկան գոյի գոյիի,  
Առնուեցան ձեռք ձեռքի  
Թօնդաց տակը գետինը,  
Հավա էլլան <sup>7)</sup> թօգերը,

4

Տաքցան, ասլան կլորեցան,  
Չորս քովը պլոտըտու եցան.  
Ակորը փաթթ ըլվեցաւ,

Ու մէջքէն խափմէշ արաւ. <sup>8)</sup>

Մառթինը մէկէն բըռնից,  
Ճըլից, վերուց թապլից:

5

Կլան տահա կըտրիճներ,  
Ան Մառթինին հիչ բան չէր,  
Նորա գալ էր պատռանը,  
Գիտէ աղայ <sup>9)</sup> աշխարքը.

Նա օմուզին <sup>10)</sup> վրացէն,  
Օպա թաված կըտրիճ է:  
6

Կարմուկ Մառթինին ուժին  
Ուժ յի համնի հիչ մէկին.  
Ակիքիէրիմ, կարմուկ Մառթին,  
Խաւ <sup>11)</sup> իս տուն գեղացիին.  
Տուն առիր ան կըլուսը,  
Քրտինքիտ հելալ հալսը:

7

Դօ, Մառթին, մէշնակ ջուտիս,  
Մեր փայն-ալ քիչ մը պահիս,  
Կոյլսուն համը մենք-ալ տեսնունք,  
Քու ուժէդ մենք ալ առնունք,  
Քեզի պէս ասլան կորինք,  
Դալ պատռինք, օպա <sup>12)</sup> զըրչինք <sup>13)</sup>

<sup>1)</sup> Ակր-հանդիսատեսութիւն: <sup>2)</sup> Մէյգան-հրապարակ, առպարէզ:  
<sup>3)</sup> Տէվէ-խալտրան-ունստ բարձրացնեց: <sup>4)</sup> Աթխուուխս-միու. ականչ: <sup>5)</sup> Ալու-  
երխան-ուրչ գլորու: <sup>6)</sup> Նախ-ժողովուրու: <sup>7)</sup> Նավա ըլլար-բարձրանալ:  
<sup>8)</sup> Խափմէշ սնել-բռներ: <sup>9)</sup> Ալաւ-բռոր: <sup>10)</sup> Ութու-ուսու: <sup>11)</sup> Խայ-սանուն,  
հոլակ: <sup>12)</sup> Սպաս-սար:

<sup>13)</sup> Այս երգն առաջին անգամ հրատարակուել է Շամիայէլ Պատկանեանցի  
Մասկուայում տպագրած երգաբանի երկրորդ տետրակում:

## ՏՕՆ - ՃՆՈՐՀՅՈՒՈՐ

Ոչ մի հայաբնակ տեղում, կարելի է ասել, այնպէս ընդունուած չէ տօնախմբութիւն կատարելը, ինչպէս նախիջնաւում: Ամեն տեղ էլ տօնախմբութիւն կայ, ամեն տեղ էլ քահանան տօնախմբութեան նախընթաց օրուայ երեկոյեան գնում է: տօնատիբոջ տունը, մօմ է տալիս տօնատիբոջ ձեռքը, պահպանիչ առում ու շնորհաւորում, ամեն տեղ էլ հանդիսաւոր կերպով իւրեանց տօնախմբութիւնը կատարողներ են լինում, բայց մի արդպիսի ընդհանուր սովորութիւն կամ կարգ, որից շատ քչերն են հայարձակում շեղուել, որ մի տեսակ պարտականացուցիչ, պաշտօնական բնաւորութիւններ ունի, ոչ մի տեղ չի կարելի տեսնել:

Տօնախմբութիւններ էլ խիստ յաճախ են պատահում, սովորհետեւ նախիջնանցիք սովորութիւն չունին իւրեանց զաւակներին ազգային անուններ տալու, որոնք մեծամասնութեամբ տօն չունին, այլ սովորաբար օրացոյցի անուններ են տալիս: Բացի սորանից, նոքա տօնում են և աղջիկների ու կանանց տօնները, թէև ոչ այնպէս հանդիսաւոր կերպով, ինչպէս տըղամարդկանցը: Յաճախակի դիտմամբ այս կամ այն անունն են գնում, որ այս ինչ կամ այն ինչ օրն էլ կատարեն տօնախմբութիւնը, կամ, ինչպէս ասում են, «Տօնաւորը»: Այդ պատճառով էլ մի հազուագլուտ երեսով չէ մի տան մէջ միեւնոյն օրն երկու կամ երեք տօն-շնորհաւոր պատահելը, ինչպէս, օրինակի հայար, Յովհաննու Մկրտչի, ս. Սարգսի ու Մարտիրոսի, Մարկոս-Ղուկասի, Յովակիմ և Աննավի և միւս արդարիսի տօններին: Երբ որ միեւնոյն բարեկամների, ազգականների և ծանօթների և առհասարակ միմեանց հետ գնալ-գալ ունեցողների շըջանում մի և նոյն անուններն են պատահում, որին և մի և նոյն օրերն են գալիս տօն-շնորհաւորները, այնպիսի կարգ է պահպանուում, որ հնարաւոր լինի ամենին էլ միւնանց տօն-շնորհաւորի պատահել, մէկ օրը մէկն է կատարում, միւս օրը միւսը, երրորդ օրը մի ուրիշը և այսպէս բարդութեան: Մեծ վիրաւորանք է համարում մէկի տօն-շնորհաւորին չերթալը, եթէ այդ մէկը քո տունդ քո տօն-շնորհաւորին եկել է:

Ջառանքը դորանից բոլորովին կտրւում են միմեանց տուն գնալ-դալուց, որովհետև յաճախ կարելի է պատահել, տեսնել այն-պիսի ընտանիքները, որոնք մինչեւ անգամ իւրեանց ոչ հեռի ազգականների տունը յաճախում են միայն տօն-շնորհաւորից տօն-շնորհաւոր: Այդ պատճառով էլ մեծ ճշգութեամբ հետևում են օրացողին, մեծ ճշգութեամբ ծանօթների, բարեկամների և ազգականների տօների ցուցակն են պահում, ճշգութեամբ էլ միտներն են պահում, թէ իւրեանց տունը տօն-շնորհաւորին ով է եկել, ով չի եկել, որ եկողին անպատճառ փոխա-գարձ այցելութեամբ պատռեն, չեկողի մօտ էլ անպատճառ չերթան: Դորանից է առաջ զալիս այն հանգամանքը, որ մեծ տօն-շնորհաւորներին քաղաքի փողոցները, որոնք առ-հաստարակ շատ խաղաղ ու հանդիսաւ են, մի առանձին կենդա-նութիւն են ստանում: Գեղեցիկ կառքերը որրնթաց արշա-ւում են, ոտքով այցելութիւն անողները խռոտում են փողոց-ներում, տների զինաւոր դռները, որոնք սովորաբար փակ են լինում, կրնկի վերալ բացուում են, մէկը մտնում, է միաը դուրս է զալիս:

Մինչեւ անգամ նոքա, որոնց անուներն այն տեսակից են, որ տոն ունենալ չեն կարող, ինչպէս Լոյսպարտնները, խաչ-երեսները, Պարոնները, Վարդերեսները, Լուսիկները, Լուսպի-քաները, Թուշիկները, Գեղեցիկները, Սրբուհիները, Տիրուհի-ները, Երանուհիները, Քրիստոսուստորները, Խաչեղբայրները և միւսները աշխատում են յարմարեցնել իւրեանց անունները մի որ և իցէ սրբի կամ սրբուհու տօնի, որ կարողանան տօն-շնորհաւոր կատարել: Վարդերեսները, օրինակի համար, կա-տարում են իւրեանց տօնը Վարդավառուին, Լոյսպարունները և Պարոնները - Լուսաւորչի տօներից մէկին, Սրբուհիները, Տիրու-հիները, Թագուհիները - Առտուածածնայ տօներից մէկին, Խաչ-երեսները, Քրիստոսուրները և Խաչեղբայրները - Խաչի տօ-ներից մէկին, որովհետև առաջին անուան մէջ «Վարդ» բառը կայ, երկրորդի մէջ «Հոգ» բառը, երրորդի մէջ «Խաչ» բառը և վերջապէս, միւսներն Առտուածածնայ մակդիրներն են: Եջօշնաւոր քաղաքները՝ մտնելով տօն-շնորհաւորի տունը,

նախապէս համբուրուսմ են տօնատիրոջ հետ, ասելով. «Մեծ օրդ շնաւոր», լիտոյ կարգով մօտենում են տօնատիրոջ ընտանիքի միւս անդամներին՝ մօրը, հօրը, եղբօրը և միւսներին, եթէ դոքա ներկայ են լինում, և ձեռք առնելով, նոցա ևս շնորհաւորում են, կրկնելով նոյն ֆորմուլան—«Մեծ օրերէ շնաւոր»: Այնուհետև հիւրը հրաւիրուում է սեղանին, եթէ սեղանէ պատրաստուած լինում, իսկ եթէ սեղան չ'կայ, մատուցուում է սուրճ, թէյ կամ շոկոլադ, ըստ կամաց, որը ցանկանայ հիւրը: Ջատերի մտնելն ու զուրս գալը մէկ է լինում, որովհետև յանախ այցելելու այնքան շատ տեղ է լինում, որ այցելողները չեն ժամանում ամեն տեղ հասնել, ուստի և շատ շտապում են: Ջատերին էլ մնում են, լաւ ուտում-խմում, յնուոյ դնում: Ցամենախն դէպս ամենքն էլ պարտական են, գոնէ, մի բաժակ դինի, կամ մի գաւաթ օղին անուշ անել և մի կտօր բան ընդունը դնել շնորհաւորելու համար: Այդ դէպքում, 'ի հարկէ, դարձեալ կրկնուում ու երեքնուում են «Մեծ օրդ շնաւոր» բառերը, որոնց վերայ շատ անգամ աւելացնում են և «Մեծ ըլլաս» բառերը:

Սեղանները սարքուում են ճաշակով և գարդարուում են թանկազին և համադամ ուտելիքներով՝ սովորական բռնուածքներով, թթուեեղէնով, ձկնեղէնով, պանիրներով, երիշիկներով, ապուշտներով, տապակածով ու խորովածով, մեղր ու կարագով և հաստ սերով-«խայմախով» ու մատղաշ «խուզիի» «փորլիցով», որ խաշած ամբողջ մեծ թարթ ձկան հետ միասին հարուստ տօն-շնորհաւորի սեղանի առաջին գարդն ու ու բնորոշ կերակուրն է: 12 ժամին, երբ արդէն բաւականին բազմութիւն է հաւաքուած լինում, մատուցուում է կասկարալ-կասկարալ համեղ թերաց-կուրաթին ձկնով, մսով, կամ հաւեղէնով, որ «բադէմով մեղէ» և «խուրաբիա» կոչուած անուշ թխուած քների հետ միասին, նոյնպէս տօն շնորհաւորների սեղանի բառկանիշ համադամներից է:

«Խուզիի փորլիցը» մատղաշ զառն է, փորն եղինձով խը-ճողած և փուռը դրած, իսկ «բադէմով մեղէն» ու «խուրա-բիան» մի տեսակ անուշեղէն են —առաջինն ամբողջապէս

ձուի սպիտակեւցից, նուշից ու շաքարից շաղախուած, երկրորդն անուշ խմորից, իւղից և կոսորած նշից:

Հիւրերին ճանապարհ ձգելու ժամանակ տօնատէրը նոյա, որտնց հետ ընտ անիքով գնալ-դալ չունի, ճանապարհ է դնում, շնորհակալութիւն բայտնելով, որ նոքա եկել էլն պատուելու նորան, իսկ նոցա, որոնց հետ ընտանիքով և երթալ-դալ» ունի, հրաւիրում է երեկոյեան ընտանիքով գայրու, եթէ մեծ հրաւէրը ունի, ասելով. «իրիկունն էլ հրամեցէք ընտանիքով», իսկ եթէ առանձին հրաւէրը չունի, ասելով, «թէև հրամեցէքով բան չունինք, բայց մօտ մաշդիկը պիտ լան, արցէք դուք այ, անպէս, նատելու»:

Երեկոյեան և զիշերը քաղաքուում շարունակուում է ցերեկուայ կենդանութիւնը: Տօն-շնորհաւորների տները լուսաւորուած են պջօրու-լապտերները վառած, ջահերը լուսաւորուած, ամեն տեղ, ամեն սենեակում ճրագ է վառուում, մինչև անգամ պատուհանների վերայ էլ մոմակալներ են դրուած լինում: Փողոցներում երեւում են խումբ-խումբ տօն-շնորհաւոր դնացողներ, ցերեկուայ պէս սլանում են կառքերը, տօնատէրերի տների դիմաւոր մուտքի դռները և բակերի դարպանները բացուած են, ամեն տեղ հիւրերի են սպասում:

Տօնատէրը և նորա ընտանիքը հրաւէրեալներին ընդունուում են մեծ սիրով և առաջնորդելով դահլիճն ու հիւրասենեակները, քաղմեցնուում են նոցա պատերի երկարութեամբ, կամ, ինչպէս առում են, ըսպատն են նըստեցնուում, տղամարդկանց տառանձին, կանանց առանձին: Գիւղերում այդ դէպքում մի առանձին կարգ է պահպանուում. պատուաւորներին նստեցնուում են առաջին տեղը, կամ, ինչպէս առում են, ավերի թռուն են նստեցնուում, իսկ միւսներին նոցա մօտ կարգով, ըստ հաստիկի, վիճակի և ըստ հասարակական դրութեան:

Դահլիճի մէջտեղը դրուած է լինում մի երկար սեղան, սպիտակ սփռոցով ծածկուած և լուսաւորուած աշտանակներով. նորա վերայ շարուած են լինում զանազան տեսակ քաղցրաւենիներ, իսուրաբիս, բազէմով-մեղէ, տանու սրատրաստած ընտիր պաքսիմատ—«պէսմէտ» և թէլի հետ վայելելու համար

ազգի-ազգի շաքարահացեր ու անուշ թխուածքներ Միւս սե-նեակն՝ դրում էլ դրուած են լինում փոքրիկ սեղաններ, դարձեալ սփռոցներով ծածկուած և չորս անկիւնում մի մի մոմակալ պրած: Ոմանք թէ իսմելու ժամանակ նոտում են սեղանների մօս, սմանք էլ մուում են բաղման իւրեանց տեղերում: Վերջիններին առանձին կերպով թէյ, քաղցրաւենիք և պաքախմատ է մատուցուում հՀրամեցէքներով: Թէյ է մատուցուում պարտականացոցիչ կերպով և ըոլոր նոր եկողներին, մինչև անդամ երբ հրաւիրուածները շատ ուշանում են:

Ընդհանուր զուարճութիւն ու ուրախութիւն արդ տօն-շնորհաւորներին սովորաբար չի լինում: Բոլորքեան նոտում են ուած, փքուած, և տօնատիրոջ հողին դուրս է զալիս, մինչեւ որ մի տեսակ կարողանում է հիւրերին զրադցնել թէյ ժամանակ և թուղթ խազալու ժամանակը հասցնել: Ընդհան-րապէս ըոլոր հիւրերին միմեանց հետ ծանօթացներու սովորութիւն չկայ, ով որ ծանօթ է, ծանօթ է, ով որ էլ ծանօթ չէ, այնպէս էլ չծանօթացած մնում է: Այդ պատճառով էլ ընդհանուր խօսակ-ցութիւն զրոց չի լինում: Տղամարդիկ կամ լռում են, կամ փոքրիկ շրջանների բաժանուած իւրեանց առօքեալ զործերի մասին են խօսում, կանայք էլ իւրեանց ծանօթներին ձեռք առնելով, կամ զլխով բարեկելով, զարձեալ կամ լռում են, կամ միմեանց հետ իւրեանց առօքեալ «զալացին», անում, բոլորե-քեան միասին խօսելով, միմեանց չլսելով և մեծ աղմուկ հա-նելով: Հետաքրքրական է կանանց միմեանց բարեկելու ձեռք: Մանօթը, եթէ մօս է նուած ծանօթին, անպատճառ ձեռք է առնում և հարցնում, «ի՞նչ կանիս», և պատասխան է սուա-նում: «Ի՞նչ անիմ»: Մինչև անդամ ծանօթները հեռուից էլ միմեանց բարեկելով, իւրեանց զլխով և երեսի զծազրութեան այնպիսի ձեւ են տալիս, որ պարզ կերպով զուրս է զալիս այդ հարց ու պատասխանը - «Ի՞նչ կանիս, — ի՞նչ անիմ»: Վերջա-պէս, թէյ անուշ անելը վերջանում է և հասնում է թղթա-խաղի ժամանակի: Ամեն տեղ բացուում են կանաչ սեղաններին իւրեանց թղթախաղի պարագաներով, և տանուտէրն ամենին հրաւիրում է թղթի նստել, աշխատելով զործն այնպէս տա-

նել, որ միմեանց բարժարուող անձինք միմեանց հետ նստեն և, որ զլիաւորն է, որ բոլորեցեան նստեն, բոլորեցեան խաղան, որովհետեւ այդպիսով նա աղաւուում է հիւրերին զրագեցնելու ծանր պարտականութիւնից: Երդ դէպքում վայն է եկել այն մարդուն տարել, ով որ թուղթ չի խաղաւմ, որովհետեւ թղթախաղը շատ երկարում է և թուղթ չ'խաղացողը ստիպուած է լինում կամ մենակ թափառել սենեակից սենեակ, կամ արս ու այն թղթախաղի սեղանին մօտենալ ու նայել և կամ մի անկիւնում կուճ գալ, յօրանջել ու ննջել:

Դիշերուայ 11—12 ժամին բացուում է նախընթրքի սեղանը զինիներով, կոնեակով և օղիով: Նախապէս զաւաթիկ-ներով մատուցուում է փունջ, որ ախտեղ պատրաստուում է տաք ջրից, շաքարից, կիտրոնից և ռօմից: Տանուտէրն առաջ ընկած, շրջեցնել է տալիս մատուցարանով փունջը թթաթ-թախաղի սեղանների մօտ, ամենքի առաջ մի մի բաժակ դնելով և խնդրելով ու ստիպելով, որ անուշ անեն, և այդ գործողութիւնը մի քանի անգամ կրկնելով, հրաւիրում է հիւրերին վերկենալ և նախընթրիք անել: Հիւրերը սովորաբար չեն թողնում, որ փունջը սառի, որովհետեւ փունջի միայն տաքն է բարզի. նոքա հրաւիրում են տօնատիրոջը, շնորհաւորում են նորս մեծ օրը և անդադար կրկնելով սովորուկն բանաձեւը, խմում են: Փունջի թիւը և քանակը սահմանափակուած չեն, մատուցուում է այնքան, որքան ցանկացող կայ: Ջատ անգամ այնքան փունջ են խմում, որ սեղանի զլիոին այլևս ոչ զինի և ոչ օղի են կարօղանում խմել: Առաջ տղամարդիկն են նախընթրիք անում, յետոյ կանալք ու աղջիկները: Կուշտ ու տելուց ու խմելուց յետոյ և բերանները խուրաքիայով ու մեղեով քաղցրացնելուց յետոյ, նորից բոլորեցեան շարուում են սեղանների չորս կողմը և շարունակում են ընդհատած թղթախաղը մինչև ընթրիքը, որ լինում է գիշերուայ 2—3 ժամին, որովհետեւ տօն-շնորհաւորն որքան որ երկար տևի, այնքան աւելի պատիւ: Է տօնատիրոջ համար:

Ընթրքի սեղանը, որ, ինչպէս ասացինք, շատ ուշ է պատրաստուում, կամարեան թէ քանի տեղ չի անցնում, որով-

հետև, նախ, արդապէս նախընթրքի ժամանակ շատերը բոլորովին կշտացած են լինում, երկրորդ, թղթախաղ ց զլուխները տաքացած լինելով, ոչ ժամանակ և ոչ ախորժակ են ունենում բան ուտելու, և, վերջապէս, ժամանակն ուշ լինելու պատճառով, բոլորի քունը տանում է, և ամենքն աշխատում են շուտով տան վերադառնալ: Ընթրքին սպորտաբար մատուցում է տապակած կայ խաշած հնդկահաւ ու բագ և կամ հնդկահաւ, ու բագ խառն, խաշած ձուկ, մրգեղին, պաղպաղակ կամ կրեմ կամ պլոմբիր:

Ընթրքից մնույ ան 'իջապէս ամենքն էլ աշխատում են փութով մնաս բարե ասել ու մեկնել, աւսափ և ամենքն էլ իրար զլուով են կպչում, իրար խառնուում, այնպէս որ յաճախ մուանում են մօտ ծանօթներին անզամ մնաս բարե ասելու: Սակայն մի բան երբէք չեն մոռանում անել — այդ տօնատիրոջը և նորա ընտանիքը փոխադարձաբար իւրեանց տներն հրաւիրելն է, հրաւէրք, որի խօսքերը նոյնպէս մի տեսակ փորմուլայի ձև են ստացել: Սպորտաբար ասում են. «Մեղի ալ, ջանթ, հրամեցէք»:

Այսում են երբեմն և շատ հանդիսաւոր — զառամթլուն տօն-շնորհաւոր երաժշտութեամբ, վարձուած խոհարարներով ու սպասաւորներով, կամ, ինչպէս, լնքեանք ասում են, «Մուզիկով», պովլըներով ու լաքէլներով տօշնաւորն. պատահում են և շէնութիւնն անող ընկերութիւններ, բայց տօն-շնորհաւորը դորանով իւր ընդհանուր բնաւորութիւնն երբէք չի փոխում: Առաջին դէպքում մեր նկարազրածի վերայ աւելանում են միայն պարերը, երկրորդ դէպքում շշէնութիւնն են անում, շատ օդի կոնծելով, պարելով ու խառնակ կերպով հարաբ-հրոց բարձրացնելով: